

Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր ՈՒ Մ Ն Ե Ր

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ
 ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ**

NN ը/կ	Հիմնավորումներ
1	2
Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն	
1.	<p style="text-align: center;">Բարելավել համայնքների բյուջեներին պետական ֆինանսական օժանդակության համակարգի արդյունավետությունը, կատարելագործել ֆինանսական համահարթեցման մեխանիզմները՝ տարբերակելով համայնքներին ցուցաբերվող օժանդակությունը</p> <p>1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը) ՀՀ կառավարության 2012 թվականի հունիսի 18-ի N 730-Ա որոշման 3.3.1.2-րդ կետով և 2013 թվականի մարտի 21-ի N 271-Ն որոշմամբ նախատեսվում է իրականացնել հատուկ օժանդակության ծրագրեր՝ սահմանամերձ և սահմանափակ ռեսուրսներ ու կարողություններ ունեցող համայնքների համար: Սահմանամերձ (ռազմական շփման հարակից գոտում գտնվող) համայնքների բնակիչներն ունեն հարկերի, տուրքերի և վճարների, մասնավորապես, հողի հարկի և ռոտզման ջրի վարձի վճարման հետ կապված խնդիրներ՝ կապված այդ գոտիների առանձնահատկությունների հետ՝ վճարովի աշխատանքների սղություն, գյուղատնտեսական մթերքի դժվար իրացում, աշխատունակ բնակչության սղություն և այլն:</p> <p>2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը Գերակա խնդրի լուծման դեպքում առավել նպաստավոր պայմաններ կստեղծվեն նշված համայնքների բնակիչների համար, ինչը կնպաստի սահմանամերձ համայնքների հողերի արդյունավետ օգտագործմանը, գյուղատնտեսական մթերքների արտադրության ծավալների և գյուղացիական տնտեսությունների եկամուտների ավելացմանը:</p>
2.	Համայնքների խոշորացման պիլոտային ծրագրերի

	<p style="text-align: center;">մեկնարկ</p> <p>1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը) 2013 թվականի ընթացքում մշակվել են համայնքների խոշորացման պիլոտային ծրագրեր: 2014 թվականին նախատեսվում է շարունակել գործընթացը, ինչպես նաև մեկնարկել արդեն իսկ մշակված ծրագրերը:</p> <p>2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը Գերակա խնդրի լուծման դեպքում կմեկնարկեն ՀՀ կառավարության կողմից հավանության արժանացած՝ համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման հայեցակարգով նախատեսված վարչատարածքային բարեփոխումները:</p>
3.	<p style="text-align: center;">Համայնքային ենթակայության կազմակերպությունների վերաբերյալ տեղեկատվական բազայի ստեղծում</p> <p>1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը) Անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ կձևավորվի քաղաքապետարանների (գյուղապետարանների) աշխատակազմերի, համայնքային ենթակայության կազմակերպությունների հաստիքացուցակների, ինչպես նաև համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց մասին տեղեկատվական էլեկտրոնային բազա, որի միջոցով հնարավոր կլինի իրականացնել կադրային գործի վարման նկատմամբ փաստաթղթային (նախնական) վերահսկողություն, ինչպես նաև ստանալ համայնքային ենթակայության կազմակերպությունների կառուցվածքի, հաստիքացուցակի և պաշտոնային դրոյքաչափերի մասին տարբերակված տեղեկանքներ, որոնք կնպաստեն նպատակային ծրագրերի, այդ թվում՝ նվազագույն աշխատավարձերի բարձրացմամբ պայմանավորված՝ անհրաժեշտ քայլերի պլանավորելմանն ու իրականացմանը:</p> <p>2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը Արդյունքում կապահովվեն համայնքներում տեղեկատվական հասարակության ձևավորումը և տեղական ինքնակառավարման մարմինների բոլոր բնագավառներում արդյունավետ կառավարման ներուժի զարգացումը:</p>
Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն	
4.	Տարածաշրջանային ինտեգրացում

	<p>1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)</p> <p>Նոր էլեկտրահաղորդման գծերի կառուցման նպատակը Վրաստանի և Իրանի էներգահամակարգերի հետ կայուն աշխատանքների ապահովումն է՝ նպատակ ունենալով բոլոր երեք երկրների էներգահամակարգերի համատեղ աշխատանքը զուգահեռ ռեժիմում:</p> <p>2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը</p> <p>Նոր էլեկտրահաղորդման գծերի կառուցմամբ նկատելիորեն կբարելավվի ծառայության որակը, զգալիորեն կխթանվի էներգետիկայի բնագավառում տարածաշրջանային փոխշահավետ համագործակցության զարգացումը, ինչպես նաև կստեղծվի նախապայման ԱՊՀ երկրների էլեկտրաէներգետիկ համակարգի հետ զուգահեռ աշխատանք կազմակերպելու համար:</p>
5.	<p>Հայկական ԱԷԿ-ի նոր էներգաբլոկի կառուցում</p> <p>1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)</p> <p>Հայկական ԱԷԿ-ի երկրորդ էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետն ավարտվում է 2016 թվականին: Հաշվի առնելով այն, որ ՀՀ-ում նոր միջուկային էներգաբլոկի կառուցումը հետաձգվել է, ՀՀ կառավարությունը որոշում ընդունեց՝ երկարաձգել Հայկական ԱԷԿ-ի երկրորդ էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետը՝ մինչև նոր միջուկային էներգաբլոկի շահագործման հանձնումը: Նկատի ունենալով այն, որ միջուկային էներգաբլոկի կառուցման աշխատանքների տևողությունը մոտավորապես 8 տարի է, անհրաժեշտ է արդեն իսկ սկսել ՀՀ-ում նոր միջուկային էներգաբլոկի կառուցման ծրագրի աշխատանքները: Նոր միջուկային էներգաբլոկի կառուցման ծրագիրն ազգային անվտանգության, Հայաստանի կայուն զարգացման և էներգետիկ անկախության ապահովման առաջնային ծրագիր է:</p> <p>ՀՀ կառավարության 2012 թ. հունիսի 18-ի N 730-Ա որոշմամբ հավանություն է տրվել ՀՀ կառավարության ծրագրին, որում ներառված էր ՀՀ-ում նոր միջուկային էներգաբլոկի կառուցման ծրագիրը: Հաշվի առնելով ՀՀ Նախագահի 2013 թ. հոկտեմբերի 10-ի N 182-ՆԿ կարգադրությամբ հաստատված ՀՀ էներգետիկ անվտանգության ապահովման հայեցակարգը և ՀՀ կառավարության 2014 թ. մայիսի 19-ի N 511-Ա որոշումը՝ նշված ծրագիրը նպատակահարմար է ներառել ՀՀ կառավարության</p>

	<p>գերակա խնդիրներում:</p> <p>2. Գերակա խնդրի լուծմանն ղեկարում ակնկալվող արդյունքը</p> <p>ՀՀ-ում նոր միջուկային էներգաբլոկի կառուցում, որը կերաշխավորի ՀՀ-ի էներգետիկ անվտանգությունն ու դիվերսիֆիկացումը:</p>
6.	<p>Հայկական ԱԷԿ-ի N 2 էներգաբլոկի՝ լրացուցիչ ժամկետում շահագործման նախապատրաստումը</p> <p>1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (սպարակը)</p> <p>«Հայկական ԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից մշակված Հայկական ատոմային էլեկտրակայանի երկրորդ էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետի երկարաձգման ծրագրի համաձայն կիրականացվեն Հայկական ԱԷԿ-ի N 2 էներգաբլոկի սարքավորումների և շինությունների համալիր գնմանն ու մնացորդային ռեսուրսի գնահատման աշխատանքները, որի արդյունքում կսկսվեն Հայկական ԱԷԿ-ի N 2 էներգաբլոկի՝ լրացուցիչ ժամկետում շահագործման նախապատրաստական աշխատանքները:</p> <p>2. Գերակա խնդրի լուծմանն ղեկարում ակնկալվող արդյունքը</p> <p>Հայկական ԱԷԿ-ի N 2 էներգաբլոկի սարքավորումների և շինությունների համալիր գնմանն ու մնացորդային ռեսուրսի գնահատման աշխատանքների արդյունքում կմշակվեն Հայկական ԱԷԿ-ի N 2 էներգաբլոկի անվտանգության բարձրացման միջոցառումների և համապատասխան սարքավորումների փոխարինման ցանկերը, և կսկսվեն դրանց ներդրման աշխատանքները:</p>
7.	<p>Հայաստանի Հանրապետության գազամատակարարման համակարգի գործունեությունն ուսումնասիրող ՀՀ Ազգային ժողովի ժամանակավոր հանձնաժողովին և ՀՀ վարչապետի որոշմամբ ստեղծված աշխատանքային խմբին աջակցություն</p> <p>1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (սպարակը)</p> <p>Վերջին շրջանում բնական գազ սպառողների կողմից բազմիցս եղել են ներկրվող բնական գազի որակական ցուցանիշների (բաղադրություն, այրման ջերմություն և այլն) վերաբերյալ դժգոհություններ: Բարձրացված հարցերի ուսումնասիրման նպատակով ՀՀ Ազգային ժողովի և ՀՀ վարչապետի համապատասխան որոշումներով ստեղծվել են դրանց համալիր ուսումնասիրման հանձնաժողով և աշխատանքային խումբ: Սույն գերակա խնդրի նպատակն է ՀՀ Ազգային ժողովի որոշմամբ ստեղծված ՀՀ</p>

	<p>Ազգային ժողովի ժամանակավոր հանձնաժողովին և ՀՀ վարչապետի որոշմամբ ստեղծված աշխատանքային խմբին ցուցաբերել մասնագիտական աջակցություն, մասնավորապես, փորձարկվող գազի նմուշառումների տեղերի ընտրություն և փորձարկումների մեթոդական աջակցություն:</p> <p>2. Գերակա խնդրի լուծմանն ղեկարում ակնկալվող արդյունքը</p> <p>Սպառողների շրջանում առաջացած հարցերին տրվող հիմնավորված պատասխանների ձևավորման գործընթացին մասնակցություն</p>
<p>Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարություն</p>	
8.	<p>Սևանա լճում էնդեմիկ ձկնատեսակների պոպուլյացիայի համալրում</p> <p>1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)</p> <p>Գերակա խնդրի լուծումը բխում է «Սևանա լճի մասին» և «Սևանա լճի էկոհամակարգերի վերականգնման, պահպանության, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան և համալիր ծրագրերը հաստատելու մասին» ՀՀ օրենքներից, ինչպես նաև ՀՀ կառավարության 2010 թ. հունիսի 24-ի «Հայաստանի Հանրապետության Նախագահին առընթեր Սևանա լճի հիմնահարցերի հանձնաժողովի 2009 թվականի աշխատանքային ծրագրին համապատասխան մշակված և Հայաստանի Հանրապետության Նախագահին առընթեր Սևանա լճի հիմնահարցերի հանձնաժողովի գրություններով ներկայացված միջոցառումների ժամանակացույցը հաստատելու մասին» N 876-Ն որոշման հավելվածի 3-րդ կետից, որի համաձայն ՀՀ պետական բյուջեից Սևանա լճի էնդեմիկ ձկնատեսակների պաշարների համալրման ծրագրի իրականացման ֆինանսավորումը նախատեսվել է տարեկան 60 մլն դրամ գումարի չափով: Ծրագրով նախատեսվում են Սևանա լճում էնդեմիկ ձկնատեսակների՝ 366.667 հազ. հատ գեղարքնուտ և ամառային իշխանի կենսունակ մանրաձկների աճեցումը և 2014 թ. 4-րդ եռամսյակում դրանց միանվագ բացթողումը Սևանա լիճ: Սևանա լճում իշխանի համալրման աճի անհրաժեշտ տեմպերի պահպանումը և բնական պայմաններում նրա գոյատևման ապահովումն առկա խնդիր է: Հատկապես, տագնապայի է Սևանա լճի էնդեմիկ իշխանի վիճակը, որը լիովին զրկվել է բնական ձվադրավայրերից և կես դարից ի վեր ամբողջությամբ կախում ունի արհեստական վերարտադրությունից:</p>

	<p>Իշխանի 4 ենթատեսակներից երկուսը՝ ձմեռային իշխանը և բոջակն արդեն իսկ անհետացել են, ամառային իշխանը բնական պայմաններում հանդիպում է եզակի առանձնյակների ձևով, փոքր-ինչ ավելի մեծ է գեղարքունի տեսակի ձկների թիվը:</p> <p>Սևանա լճի ձկան պաշարների համալրումն արհեստական բուծման միջոցով խիստ անհրաժեշտ է գեղարքունու և ամառային իշխանի՝ բնական պայմաններում գոյատևումը երաշխավորելու համար:</p> <p>2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը</p> <p>Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվում են ձկնատեսակների պոպուլյացիաների վիճակի բարելավում և գետերում բնական ձվադրավայրերի վիճակի բարելավման համար արգելավայրերի հիմնման նախադրյալների ստեղծում:</p>
9.	<p>«Սյունիքի մարզում կենսոլորտային տարածքի ստեղծում» ծրագրի իրականացում</p> <p>1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)</p> <p>Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարության միջև 2009-2010 թթ. ֆինանսական համագործակցության մասին համաձայնագրի 1-ին հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետը՝ 2011 թվականի հուլիսի 18-ին Գերմանական վերակառուցման և զարգացման բանկի, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության և ՀՀ բնապահպանության նախարարության կողմից ստորագրվել է «Կովկասի պահպանվող տարածքների աջակցության ծրագիր - Հայաստան (Էկոտարածաշրջանային ծրագիր - Հայաստան, փուլ 3-րդ)» ֆինանսավորման համաձայնագիրը, որի նպատակը Հարավային Հայաստանում կենսոլորտային պահպանավայրի ստեղծման ծրագրի իրականացումն է:</p> <p>Գերմանական վերակառուցման և զարգացման բանկի 2013 թ. սեպտեմբերին կատարված առաքելության ժամանակ Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության հետ կնքվել է համագործակցության լրացուցիչ համաձայնագիր, որով նշված ծրագրի ֆինանսավորման ծավալներն ավելացվել են:</p> <p>Վերանվանված Հայաստանի բաց ներդրումային (օժանդակության) ծրագրի շրջանակներում ընտրված տարածքներում կենսոլորտային պահպանավայրի ստեղծման նպատակով կիրա-</p>

	<p>կանացվեն բնական ռեսուրսների և պահպանվող տարածքների կառավարման բարելավմանը, հարակից համայնքների սոցիալ-տնտեսական զարգացմանը նպատակատղիված միջոցառումներ:</p> <p>Ծրագրով նախատեսվում է իրականացնել մի շարք միջոցառումներ, այդ թվում՝</p> <ul style="list-style-type: none"> • ծրագիրն իրականացնող կազմակերպության ընտրության միջազգային մրցույթի կազմակերպում. • «Արևիկ» ազգային պարկի սահմանների ճշգրտում և քարտեզագրում. • հարակից համայնքների սոցիալ-տնտեսական իրավիճակի ուսումնասիրություն և գնահատում: <p>2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը «Սյունիքի մարզում կենսոլորտային տարածքի ստեղծում» ծրագրի իրականացում» գերակա խնդրի լուծման դեպքում կապահովվեն նախադրյալներ՝ Հարավային Հայաստանում կենսոլորտային պահպանավայրի ստեղծման համար:</p>
Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն	
10.	<p>Եվրասիական տնտեսական միությանն անդամակցությամբ պայմանավորված՝ Հայաստանի Հանրապետության մաքսային և հարկային օրենսդրության համապատասխանեցումը Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսդրությանը որպես Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի գերակա խնդիր սահմանելու անհրաժեշտության վերաբերյալ</p> <p>1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)</p> <p>Գերակա խնդրի նպատակը Եվրասիական տնտեսական համագործակցության շրջանակներում գործող Եվրասիական տնտեսական միությանն անդամակցելու համար անհրաժեշտ օրենսդրական փոփոխությունների կատարման համապատասխան աշխատանքների իրականացումն է:</p> <p>2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը</p> <p>Գերակա խնդրի լուծման արդյունքում ակնկալվում է կատարել աշխատանքներ՝ Հայաստանի Հանրապետության հարկային և մաքսային օրենսդրության ու Եվրասիական տնտեսական միության օրենսդրության մոտարկման համար:</p>
11.	<p>«ՀՀ մաքսային տեղեկատվական տեխնոլոգիաների ներդաշնակեցում Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների տեղեկատվական համակարգերի հետ» գերակա խնդրի սահմանման անհրաժեշտության</p>

	<p style="text-align: center;">վերաբերյալ</p> <p style="text-align: center;">1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)</p> <p>Այս խնդրի անհրաժեշտությունը պայմանավորված է Եվրասիական տնտեսական միությանը մոտ ապագայում անդամակցության շրջանակներում օրենսդրական և ինստիտուցիոնալ փոփոխությունների իրականացման անհրաժեշտությամբ և Մշտապես գործող ֆինանսատնտեսական նախարարական կոմիտեի 2013 թվականի դեկտեմբերի 5-ի N 23.20/[180329]-13 և Մշտապես գործող նախարարական պետաիրավական կոմիտեի նիստի 2013 թվականի դեկտեմբերի 5-ի N 16.3/180094/ արձանագրություններով:</p> <p style="text-align: center;">2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող ստրուկտուրա</p> <p>Գերակա խնդրի լուծման արդյունքում կապահովվեն Եվրասիական տնտեսական միության անդամակցության համար անհրաժեշտ հիմքեր:</p>
<p>12.</p>	<p style="text-align: center;">«Պետական ծախսերի կառավարման արդյունավետության բարձրացման նպատակով ծրագրային բյուջետավորման ներդրման ուղղությամբ իրականացվող բարեփոխումների շարունակում» ուղղությամբ անհրաժեշտ աշխատանքների իրականացումը որպես</p> <p style="text-align: center;">ՀՀ կառավարության 2014 թվականի գերակա խնդիր սահմանելու անհրաժեշտության վերաբերյալ</p> <p style="text-align: center;">1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)</p> <p>Գերակա խնդրի նպատակը ՀՀ կառավարության 2014 թվականի մայիսի 19-ի N 511-Ա որոշման հավելվածի (ՀՀ կառավարության գործունեության ծրագիր) «2.2.4. Բյուջետային համակարգ» ենթաբաժնի հինգերորդ պարբերության երկրորդ ենթակետով ամրագրված «ստեղծվելու են անհրաժեշտ նախադրյալներ՝ լիարժեք ծրագրային բյուջետավորման անցման համար՝ սկսած 2018 թվականից» դրույթի կատարման ապահովումն է:</p> <p>ՀՀ ֆինանսների նախարարությունը 2005 թվականից նախապատրաստական աշխատանքներ է իրականացնում բյուջետավորման մոտքերի (ծառայությունների մատուցման համար օգտագործվող ռեսուրսների) վրա հիմնված եղանակից արդյունքների վրա հիմնված եղանակին աստիճանական անցման</p>

նպատակով անհրաժեշտ պայմանների ստեղծման համար:

Արդյունքում, նշված անցումային գործընթացում արդեն ընդգրկվել են բոլոր պետական կառավարման մարմինները: ՀՀ պետական բյուջեների նախագծերը, ավանդական ձևաչափին զուգահեռ, մշակվել են նաև ծրագրային բյուջետավորման պահանջներին համապատասխանող ձևաչափով և ներառվել են համապատասխան տարիների բյուջետային փաստաթղթերում:

ՀՀ 2012 թվականի բյուջետային գործընթացում փորձական կարգով ներդրվել են ծրագրային բյուջետավորման պահանջներից բխող նոր տարրեր՝ (i) ՀՀ պետական բյուջեով ծախսային ծրագրեր իրականացնող բոլոր գերատեսչությունների գծով նոր ծրագրային կառուցվածքի և այդ ծրագրերի նոր դասիչների համակարգ, որի համաձայն էլ կազմվել են՝ ինչպես 2012 թվականի, անպես էլ՝ 2013 և 2014 թվականների ՀՀ պետական բյուջեների նախագծերը և (ii) ծրագրով նախատեսված փորձարարական երեք գերատեսչություններ (ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ՀՀ գյուղատնտեսության նախարարություն, ՀՀ կառավարության առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանություն) կազմել և իրենց 2012-2014 թթ. ՄԺԾԾ հայտերի կազմում ՀՀ ֆինանսների նախարարություն են ներկայացրել բյուջետային ծրագրի նկարագրերը (անձնագրերը): Այս փորձը շարունակվել է նաև ՀՀ 2013 և 2014 թվականների բյուջետային գործընթացների շրջանակներում:

Արդյունքում՝ արդեն 2013 թվականի ավարտին ունենք 27 բյուջետային ծրագրերի նկարագրեր (անձնագրեր): Բյուջետային ծրագրերի նկարագրերը (անձնագրերը) հնարավորություն են ընձեռում սահմանելու հանրային ֆինանսների պլանավորման համար յուրաքանչյուր բյուջետային ծրագրով անհրաժեշտ ընթացիկ իրավիճակը նկարագրող հենանիշերը և թիրախները:

Բարեփոխումների փորձական ներդրման արդյունքների հիման վրա մշակվել է «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ, որը 2013 թվականի ապրիլի 30-ին ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից և գործում է: Նշված օրենքը, ի թիվս կարգավորման մի շարք խնդիրների, լուծել է նաև հանրապետության պետական ֆինանսների կառավարման համակարգում ՀՀ կառավարության կողմից իրականացվող ծրագրային բյուջետավորման բարեփոխումների ներկայիս ձեռք բերված

	<p>արդյունքները զարգացնելու և բարեփոխումները շարունակելու համար անհրաժեշտ իրավական հիմքեր ստեղծելու, մասնավորապես, օրենքի ուժով ծրագրային բյուջետավորման համակարգը բյուջետային գործընթացի բաղկացուցիչ և անբաժանելի մաս դարձնելու խնդիրը:</p> <p>2. Գերակա խնդրի լուծմանն ղեկարում ակնկալվող արդյունքը Գերակա խնդրի լուծման արդյունքում ակնկալվում են՝</p> <p>1) բյուջետային ծրագրի նկարագրի (անձնագրի) կազմման լրամշակված (ստացված) մեթոդական ցուցումների առկայություն և դրա կիրառման հետ կապված խորհրդատվության տրամադրում համապատասխան գերատեսչություններին.</p> <p>2) մեթոդական ցուցումներին համապատասխան փորձարարական 10 գերատեսչությունների կողմից իրենց 2015-2017 թվականների ՄԺԾԾ հայտի հետ մեկտեղ՝ յուրաքանչյուրը մեկական բյուջետային ծրագրի նկարագիր (անձնագիր) ներկայացնելու արդյունքում փորձարարական կարգով ստեղծված 37 բյուջետային ծրագրերի նկարագրերի (անձնագրերի) առկայություն:</p>
<p>13.</p>	<p>ՀՀ պետական ֆինանսների կառավարման համակարգի գործունեության արդյունավետության մոնիթորինգի իրականացման համար հիմքերի ստեղծման նպատակով ՀՀ պետական ֆինանսների կառավարման արդի համակարգի որակի ամբողջական պատկերի ստացումը որպես Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի գերակա խնդիր սահմանելու անհրաժեշտության վերաբերյալ</p> <p>1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը) Հայաստանի Հանրապետությունում անհրաժեշտ է պարբերաբար անցկացնել պետական ֆինանսների կառավարման համակարգի (այսուհետ՝ ՊՖԿՀ) գնահատում՝ պետական ֆինանսների կառավարման համակարգի շարունակական և անաչառ կերպով ստուգելի գնահատման, բարեփոխումների ընթացքի գնահատման համար: Բացի դրանից, ՊՖԿՀ-ի գնահատման արդյունքները կօգտագործվեն 2011-2020 թթ. պետական ֆինանսների կառավարման համակարգի բարեփոխումների ռազմավարության և դրա թիրախների վերանայման համար: Այս գնահատումը կայուն և համեմատական հիմք է ապահովում բարեփոխումների մշակման ու իրականացման ռազմավարության առավել խնդրահարույց և գերակա ոլորտների նախանշման, ինչպես նաև տարբեր դերակատարների կողմից իրականացվող պետական ֆինանսների կառավարման համակարգի բարեփոխումների զանազան տարրերի</p>

ընթացքի ներդաշնակեցման համար:

Հայաստանի Հանրապետությունում ՊՖԿՀ-ի առաջին գնահատման իրականացվել է 2008 թվականին: Վերջնական հաշվետվությունը պատրաստվել է 2008 թվականի հոկտեմբերին և հասանելի է հետևյալ կայքում՝ <http://www.pefa.org/en/content/pefa-publically-available-assessments>: 2008 թվականի ՊՖԿՀ-ի ինքնագնահատման գործընթացը համակարգվում էր ՀՀ ֆինանսների նախարարության և օժանդակվում դոնոր համայնքի կողմից: 2008 թվականին իրականացված ՊՖԿՀ-ի գնահատումը հետագայում կիրառվեց երկրում պետական ֆինանսների կառավարման համակարգի բարեփոխումների օրակարգի նախագծման և կարգաբերման ընթացքում:

Պետական ֆինանսների կառավարման կատարողականության գնահատման շրջանակի կիրառման հաջող փարձառության համաձայն՝ ՊՖԿՀ-ի գնահատումը պետք է անցկացվի նվազագույնը 3 և առավելագույնը 5 տարի պարբերականությամբ: Այսպիսով, Հայաստանի Հանրապետությունում գերադասելի էր հերթական երկրորդ գնահատումն սկսել 2013 թվականին: Բացի դրանից, պետական ֆինանսների կառավարման մանրամասն գործողությունների ծրագիր է մշակվել միայն առաջին փուլի համար, այսինքն՝ մինչև 2014 թվականը, և ՊՖԿՀ-ի հերթական գնահատումը պետք է օգնի սահմանել պետական ֆինանսների կառավարման համակարգի բարեփոխումների ռազմավարությունում ներկայացված բարեփոխումների գերակայությունները: ՊՖԿՀ-ի գնահատումը պետք է անդրադառնա նաև գնահատման դինամիկային՝ նախորդ գնահատման գործընթացի համեմատ: Ըստ այդմ, 2013 թվականին հանրապետությունում նախաձեռնվեց (ՊՖԿՀ) երկրորդ գնահատման (ինքնագնահատման) գործընթացը, որը, ինչպես և առաջին անգամ, նույնպես համակարգվում է ՀՀ ֆինանսների նախարարության և օժանդակվում դոնոր համայնքի կողմից: Աշխատանքների հիմնական մասն իրականացվել է 2013 թվականի վերջում: Գնահատման արդյունքներով կազմվել է համապատասխան հաշվետվության նախագիծ: Նշված հաշվետվությամբ կատարված ՊՖԿՀ-ի գնահատման հուսալիությունը երաշխավորելու նպատակով 2014 թվականին գնահատման որակի ապահովման գործընթաց տեղի ունեցավ: ՊՖԿՀ հաշվետվության նախագիծը ներկայացվել է ՊՖԿՀ քարտուղարություն՝ ՊՖԿՀ ստուգման՝ վավերացման ընթացակարգ անցնելու համար: ՀԾՖՀ քարտուղարության որակի երաշխավորման գործընթացի

	<p>պահանջները բավարարող ՀՀ պետական ծախսերի կառավարման համակարգի գնահատման մասին հաշվետվությունն առաջիկայում հրապարակվելու է:</p> <p>1. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը</p> <p>Գերակա խնդրի լուծման արդյունքում ակնկալվում է ունենալ ՀԾՖՀ քարտուղարության որակի երաշխավորման գործընթացի պահանջները բավարարող՝ հրապարակված ՊՖԿԸ գնահատման մասին հաշվետվություն, որը կներկայացնի ՀՀ պետական ֆինանսների կառավարման արդի համակարգի որակի ամբողջական պատկերը: Վերջինիս առկայությունը հնարավորություն կընձեռնի պետական ֆինանսների կառավարման ռազմավարության, բարեփոխումների հիմնական թիրախների և օրակարգի հաջորդականության ճշգրտման անհրաժեշտության հարցերի առարկայական քննարկման, ինչպես նաև պետական ֆինանսների կառավարման ռազմավարության երկրորդ փուլի գերակայությունների ու մանրամասն գործողությունների ծրագրի մշակման համար՝ դրանով իսկ հիմքեր ստեղծելով ՀՀ պետական ֆինանսների կառավարման համակարգի գործունեության արդյունավետության հետագա մոնիթորինգ իրականացնելու համար:</p>
<p>14.</p>	<p>Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի կազմակերպություններում հաշվապահական հաշվառման նոր համակարգի ներդրման համար անհրաժեշտ իրավական ակտերի մշակման ուղղությամբ անհրաժեշտ աշխատանքների իրականացումը որպես Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի գերակա խնդիր սահմանելու անհրաժեշտության վերաբերյալ</p> <p>1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)</p> <p>Գերակա խնդրի նպատակը Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի կազմակերպություններում հաշվապահական հաշվառման նոր համակարգի ներդրման համար անհրաժեշտ իրավական ակտերի մշակման և հաստատման ուղղությամբ անհրաժեշտ աշխատանքների կատարումն է:</p> <p>2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը</p> <p>Գերակա խնդրի լուծման արդյունքում ակնկալվում է կիրառելու համար հաստատել հանրային հատվածի կազմակերպություններում հաշվապահական հաշվառման նոր համակարգի ներդրման</p>

	<p>համար անհրաժեշտ իրավական ակտերը:</p>
15.	<p style="text-align: center;">«Ռիսկերի կառավարման համակարգի կատարելագործումը» որպես Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի գերակա խնդիր սահմանելու անհրաժեշտության վերաբերյալ</p> <p style="text-align: center;">1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)</p> <p>Հարկային վարչարարության բարելավման թիրախային ուղղություն է համարվում հարկային հսկողությունը: Հարկային հսկողության արդյունավետության բարձրացման ուղղությամբ ՀՀ կառավարության մոտեցումն այն է, որ անցում կատարվի ավելի պակաս թվով ստուգումների անցկացման քաղաքականության՝ ապահովելով տնտեսավարող սուբյեկտների համար հարկային հսկողության թափանցիկություն և հասցեական մոտեցում՝ միաժամանակ ապահովելով հարկերը հասանելի չափով ապահովելու խնդրի իրագործումը:</p> <p>Միաժամանակ կարևոր ուղղություններից է համակարգի վերլուծական կարողությունների զարգացումը՝ ռիսկերի վրա հիմնված ստուգումների նոր համակարգված մոտեցում ներդնելով ստուգումների գործընթացում բարձրացնելով ստուգումների արդյունավետությունը:</p> <p style="text-align: center;">2. Գերակա խնդրի լուծման ղեկավարում ակնկալվող արդյունքը</p> <p>Հարկային և մաքսային վարչարարության բարեփոխումների շրջանակում նախատեսվում է կատարելագործել հարկային մարմնի կողմից իրականացվող հսկողական մեխանիզմները, բարձրացնել կիրառվող հսկողական գործիքների արդյունավետությունը: Արդյունքում՝ վերլուծական կարողությունների զարգացմամբ կբարձրանա տարբեր աղբյուրներից ստացվող տեղեկատվության կիրառման արդյունավետությունը՝ ապահովվելով հարկային հսկողության թափանցիկություն, հնարավորություն ընձեռնելով իրականացնելու հասցեական և արդյունավետ ստուգումներ, հարկային ռեսուրսներն ուղղելով առավել ռիսկային ոլորտներ՝ «բարեխիղճ» հարկ վճարողների նկատմամբ կիրառելով թեթևացված հարկային վարչարարություն:</p>

16.	<p align="center">«Հարկ վճարողների սպասարկման մեխանիզմների զարգացումը» Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի գերակա խնդիր սահմանելու անհրաժեշտության վերաբերյալ</p> <p align="center">1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)</p> <p>Հարկ վճարողների սպասարկման ծառայությունների ընդլայնման շրջանակներում հատկապես կարևորվում է էլեկտրոնային եղանակով հաշվետվությունները ներկայացնելու համակարգի բարելավմամբ հարկային մարմնի կողմից մատուցվող էլեկտրոնային ծառայությունների ավելացման աշխատանքների իրականացումը՝ նպաստելով հարկային մարմնի և հարկ վճարողի միջև անմիջական շփման հնարավորինս կրճատմանն ու ժամանակին համահունչ, որակյալ ծառայությունների մատուցմանը:</p> <p>Խնդրի կարգավորման մաս կազմող հաջորդ կարևոր բաղադրիչը նոր սպասարկման կենտրոնների գործարկումն է՝ դրանցում մատուցվող ծառայությունների շրջանակի ընդլայնմամբ և որակի բարձրացմամբ, սպասարկման միասնական ստանդարտների ներդրմամբ, հարկ վճարողներին օժանդակող տեղեկատվության հրապարակմամբ:</p> <p align="center">2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը</p> <p>Նախատեսվում է կատարելագործել էլեկտրոնային կառավարման, ինչպես նաև հաշվետվական համակարգերը՝ նպաստելով հարկային մարմնի կողմից մատուցվող էլեկտրոնային ծառայությունների ավելացմանը, հարկ վճարողների կողմից հաշվետվություններ ներկայացնելու առումով հարկային կարգապահության բարձրացմանը:</p> <p>Նոր սպասարկման կենտրոնների գործարկման արդյունքում հնարավորություն կընձեռվի բարձրացնելու հարկ վճարողների սպասարկման մակարդակը՝ ապահովելով մատուցվող ծառայությունների հասանելիությունը և կիրառությունը հարկ վճարողների ամենալայն շրջանակների համար, ինչն էլ իր հերթին կլիթանի հարկ վճարողների ինքնագնահատման համակարգի զարգացումը և կնվազեցնի հարկ վճարողների վարչարարական ծախսերը:</p>

17.	<p style="text-align: center;">«Պետական բյուջեի կատարման մասին հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգի ներդրումը և ինտեգրումը գործող համակարգերին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի գերակա խնդիր սահմանելու անհրաժեշտության վերաբերյալ</p> <p style="text-align: center;">1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)</p> <p>Ներկայումս պետական մարմինների կողմից ՀՀ պետական բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվությունները ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացվում են թղթային կրիչներով, որոնք մուտքագրվում են գործող լրկալ համակարգ, որը թույլ է տալիս հաշվետվություններում արտացոլված տվյալները համադրել ՀՀ ֆինանսների նախարարությունում գործող այլ համակարգերից («LSBudget» և «Գանձապետական գործառնական օր») ստացվող տվյալների հետ: Վերջիններիս հետ հաշվետվությունների ստուգման նոր համակարգչային ծրագիրը թեստավորվում է 2013 թվականից: Հաշվետվությունների պատրաստման վրա ծախսվող ժամանակը կրճատելու և առավել որակյալ հաշվետվություններ ստանալու նպատակով նախատեսվում է ներդնել էլեկտրոնային եղանակով հաշվետվությունների ստացման համակարգը:</p> <p>Պետական ֆինանսների կառավարման համակարգի արդյունավետության բարձրացման նկատառումով նախատեսվում է կատարելագործել և ամբողջությամբ ավտոմատացնել ՀՀ պետական բյուջեի կատարման մասին հաշվետվությունները ներկայացնելու և ամփոփելու գործող համակարգը:</p> <p>Խնդրի կարգավորման առարկան ՀՀ պետական բյուջեի կատարման մասին հաշվետվությունները ներկայացնելու և ամփոփելու համակարգի ամբողջական ավտոմատացումն է:</p> <p style="text-align: center;">2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը</p> <p>Համակարգի նախատեսվող կատարելագործման արդյունքում պետական մարմինները հնարավորություն կստանան ՀՀ պետական բյուջեի կատարման մասին հաշվետվություններն էլեկտրոնային եղանակով առաքելու ՀՀ ֆինանսների նախարարություն, որտեղ համակարգի միջոցով կգնահատվի դրանցում արտացոլված տվյալների համապատասխանությունը դրանց համար սահմանված պահանջներին՝ վերջիններս համեմատելով նախարարությունում գործող մյուս համակարգերում առկա տվյալների հետ: Համակարգի</p>
-----	--

	<p>կատարելագործումը հնարավորություն կտա կրճատելու հաշվետվությունների պատրաստման վրա ծախսվող ժամանակը, ստանալու առավել որակյալ հաշվետվություններ, ինչպես նաև բարձրացնելու պետական մարմինների պատասխանատվությունը՝ հաշվետվությունները ժամանակին և արժանահավատ ներկայացնելու առումով:</p>
<p>Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարություն</p>	
<p>18.</p>	<p style="text-align: center;">Ստեփանավանի օդանավակայանի վերագործարկում</p> <p style="text-align: center;">1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը) ՀՀ կառավարության 2013 թվականի օգոստոսի 29-ի N 932-Ա որոշմամբ «Ստեփանավան» օդանավակայան» ՓԲԸ-ի 100% պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերի կառավարման լիազորությունները փոխանցվել են ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությանը: Օդանավակայանը գտնվում է Ստեփանավանի կենտրոնից 6 կմ հեռավորության վրա, Սարատովկա գյուղից հարավ ընկած տարածքում: Օդանավակայանի շենքերի և շինությունների մակերեսը շուրջ 1154.1 քառ. մետր է, իսկ դրանց օգտագործման համար հատկացված հողատարածքը՝ 61.7 հեկտար: Ընկերությունը 2006 թվականից որևէ գործունեություն չի ծավալել:</p> <p>«Ստեփանավան» օդանավակայան» ՓԲԸ-ն, որի գործունեության ոլորտն օդանավակայանի շահագործումը, թռիչքների տեխնիկական սպասարկումը և կառավարումը, ուղևորների, բեռների ու փոստի փոխադրումն է, ընդգրկված էր «Պետական գույքի մասնավորեցման 2006-2007 թթ. ծրագրի մասին» ՀՀ օրենքի մասնավորեցման ենթակա օբյեկտների (ընկերությունների) ցանկում:</p> <p>ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության գործառույթների շրջանակներում նախատեսվող աշխատանքներն արդյունավետ և առավել օպերատիվ իրականացնելու նպատակով խիստ անհրաժեշտ է նախարարության ենթակայության տակ ունենալ օդանավակայան: Օդանավակայանի տարածքում պետք է իրականացվեն հսկայածավալ աշխա-</p>

տանքներ. պետք է հիմնովին վերանորոգվի վարչական շենքը, 2050 մետր երկարությամբ թռիչքուղին, ցանկապատվի տարածքը և իրականացվեն այլ բազմաթիվ միջոցառումներ՝ օդանավակայանը միջազգային ստանդարտներին համապատասխանեցնելու համար: Ստեփանավանի օդանավակայանի վերագործարկման արդյունքում հանրապետությունում կապահովվի արտակարգ իրավիճակների կանխման, հետևանքների վերացման նպատակով օդուժի կիրառումը:

Հաշվի առնելով հանրապետության աշխարհագրական պայմանները և ռազմավարական նշանակությունը, լեռնային ու այլ դժվարամատչելի վայրերում հրդեհաշիջման, այլ փրկարարական աշխատանքների իրականացման ու արտակարգ իրավիճակներին հակազդման նպատակով օդային տրանսպորտի կիրառման կարևորությունը՝ խիստ անհրաժեշտ է ունենալ օդային տրանսպորտի բազավորման, վայրէջքի և թռիչքի հնարավորություններ: Ստեփանավանի օդանավակայանի վերագործարկումը և զարգացումը կնպաստեն հանրապետության տարածքում ու արտերկրում փրկարարական աշխատանքների օպերատիվության բարձրացմանը:

2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը

Ստեփանավանի օդանավակայանի վերագործարկման շնորհիվ կբարձրանան բնակչության պաշտպանության, արտակարգ իրավիճակների կանխման և հնարավոր հետևանքների վերացման, երկրի ներսում ու արտերկրում փրկարարական աշխատանքների իրականացման արդյունավետությունն ու օպերատիվությունը: Դրանք կունենան նաև ռազմավարական մեծ նշանակություն, օդանավակայանի վերագործարկումը կխթանի փոքր ավիացիայի զարգացումը: Օդանավակայանում կլինեն ուղղաթիռներ և փոքր ինքնաթիռներ, ինչպես նաև հայռուսական մարդասիրական կենտրոնի ավիացիան:

Օդանավակայանի առկայությունը նախարարությունում ստեղծված փրկարարական օդադեսանտային խմբին հնարավորություն կտա մշտապես իրականացնելու օդադեսանտային պատրաստության համար անհրաժեշտ՝ սահմանված թվով թռիչքներ:

Օդանավակայանը հնարավորություն կընձեռի իրակա-

	<p>նացնելու շրջակայքի մշտադիտարկում, հետախուզական, հետազոտական, որոնողափրկարարական աշխատանքներ, արագ արձագանքելու անտառային հրդեհներին, և, հատկապես, կարևորվում է ավիացիայի դերը հակակարկտային պայքարն առավել արդյունավետ դարձնելու գործում:</p> <p>Օդային տրանսպորտի միջոցով հնարավոր կդառնա օպերատիվորեն արձագանքել արտակարգ իրավիճակներին, ապահովել փրկարարական ուժերի և անհրաժեշտ միջոցների ժամանակին տեղափոխումն աղետի գոտի՝ կտրուկ նվազեցնելով մարդկային և նյութական կորուստները:</p>
<p>19.</p>	<p align="center">Բնակչության ազդարարման համակարգի արդիականացում</p> <p align="center">1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)</p> <p>Խորհրդային ժամանակաշրջանում հիմնված ազդարարման համակարգերը բարոյապես և տեխնիկապես մաշվել են, իսկ որոշ վայրերում՝ վերացվել: Անհրաժեշտություն է առաջացել հիմնել ժամանակակից, տեխնիկապես հագեցված ազդարարման համակարգեր՝ առաջնահերթությունը տալով սահմանամերձ գոտու բնակավայրերին: Բնակչության ազդարարման համակարգի արդիականացման անհրաժեշտությունն ամրագրված է Հայաստանի Հանրապետության Նախագահի 2011 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական պաշտպանության հայեցակարգը հաստատելու մասին» ՆԿ-229-Ն կարգադրությամբ:</p> <p>2014 թվականին դռնորների միջոցների հաշվին իրականացվելու է հանրապետության տարածքում տեղակայված ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության հրշեջ փրկարարական ջոկատների, մարզային փրկարարական վարչությունների և այլ ստորաբաժանումների շենքերում օպտիկամանրաթելային մալուխների անցկացումը, համակարգի որոշ գործառույթների թվայնացումը: Միաժամանակ պետք է արդիականացնել բնակչության ազդարարման բնագավառը կանոնակարգող իրավական դաշտը և համապատասխանեցնել Հայաստանի Հանրապետության Նախագահի 2011 թվականի դեկտեմբերի 27-ի ՆԿ-229-Ն կարգադրության պահանջներին, որի արդյունքում ժամանակակից բարձր արտադրողականություն ունեցող բարձրախոսների տեղադրման միջոցով այդ կետերից կապահովվի կենտրոնացված լոկալ ազդարարում:</p> <p>Կենտրոնացված ազդարարման հանրապետական համա-</p>

	<p>կարգը պետք է արդիականացվի՝ հաշվի առնելով հանրապետությունում կապի զարգացման հեռանկարային ծրագրերը և ներդրվող կապի տեսակները, իսկ ազդարարման լոկալ համակարգերը պետք է վերակառուցվեն և արդիականացվեն՝ ապահովելով կազմակերպությունների անձնակազմի ժամանակին ու արդյունավետ ազդարարումը:</p> <p>2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը</p> <p>Բնակչության ազդարարման համակարգի արդիականացումը թույլ կտա ապահովել ազդարարման համակարգերի մշտական պատրաստականությունը, կրարձրացնի բնակչության պաշտպանության մակարդակը և բնակչության ազդարարման կազմակերպման արդյունավետությունը:</p>
<p>Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն</p>	
<p>20.</p>	<p>Երիտասարդական պետական քաղաքականության մշակման շրջանակներում երիտասարդության մասնակցային գործընթացների խթանում և ինստիտուցիոնալ հիմքերի զարգացում</p> <p>1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)</p> <p>Վերջին տարիներին երիտասարդության շրջանում տեղի ունեցող տեղական և միջազգային զարգացումներն անհրաժեշտություն են առաջացրել արդիականացնելու պետական երիտասարդական քաղաքականության հայեցակարգային մոտեցումները: Այսօր ոլորտը կանոնակարգող պետական երիտասարդական քաղաքականության հայեցակարգը հաստատվել է դեռևս 1998 թվականին և համահունչ է եղել այդ ժամանակահատվածին: 1998 թվականից մինչև օրս փոփոխվել են՝ ինչպես պետական երիտասարդական քաղաքականության շահառու հանդիսացող խմբին վերաբերող վիճակագրական ցուցանիշները, այնպես էլ՝ շահառուներին հուզող հիմնախնդիրները: Ժամանակի ռզում, արդի միջազգային զարգացումներին ոլորտի քաղաքականությունը համապատասխանեցնելու նպատակով անհրաժեշտություն է առաջացել արդիականացնելու ոլորտը կանոնակարգող իրավական նորմերը՝ մշակելու ՀՀ երիտասարդական պետական քաղաքականության նոր հայեցակարգ:</p> <p>ՀՀ հասարակական-քաղաքական գործընթացներին մարզային երիտասարդության մասնակցության առավել արդյունավետ մեխանիզմների ներդրումը նպատակ ունի նպաստելու</p>

	<p>ՀՀ երիտասարդական պետական քաղաքականության 2013-2017 թվականների ռազմավարության միջոցառումների ծրագրի գերակայություն 1-ում ամրագրված գործողությունների արդյունավետ իրականացմանը:</p> <p>2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը</p> <p>Պետական երիտասարդական քաղաքականության արդյունավետ իրականացման նպատակով առավել փաստարկված երիտասարդական քաղաքականության մշակում, մարզային հասարակական կազմակերպությունների գործունեության խթանում, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների՝ երիտասարդական քաղաքականության ոլորտին առնչվող աշխատանքներում և որոշումների ընդունման գործընթացներում երիտասարդների ներգրավում:</p>
21.	<p>Նախադպրոցական և դպրոցական տարիքի երեխաների շրջանում ֆիզիկական կուլտուրայի ու սպորտի դերի կարևորում և տարբեր մարզաձևերով մարզվելու կողմնորոշման ձևավորում</p> <p>1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)</p> <p>Անհատի բազմակողմանի և ներդաշնակ զարգացում, երեխաների առողջ ապրելակերպի ձևավորման գործում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի դերի կարևորում ու բարձրացում, նախադպրոցական և դպրոցական տարիքի երեխաների շրջանում տարբեր մարզաձևերով մարզվելու կողմնորոշման ձևավորում, ինչպես նաև խոստումնալից երեխաների հայտնաբերում մանկապատանեկան մարզադպրոցների համար:</p> <p>2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը</p> <p>Նախադպրոցական տարիքի երեխաների և հանրակրթական դպրոցների տարրական (1-4-րդ) դասարանների աշակերտների ֆիզիկական ունակությունների բարելավում, տարբեր մարզաձևերում ընդգրկվող երեխաների թվի ավելացում: Նախադպրոցական և դպրոցական տարիքի երեխաների շրջանում անցկացված «Սպորտլանդիաներ», անցկացվող մարզական միջոցառումների և մասնակիցների թվի ավելացում, առողջության ամրապնդում, ուսումնական գործընթացից հիվանդության պատճառով բացակայող երեխաների թվի նվազում:</p>
Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարություն	
22.	<p>ՀՀ սփյուռքի նախարարության և համահայկական կառույցների համատեղ ծրագրերի ընդլայնում</p>

	<p>1. Անհրաժեշտությունը (նպատակը)</p> <p>Աշխարհասփյուռ հայության առջև մշտապես ծառայած է հայապահպանության գերխնդիրը: Դրա լուծմանն են ուղղված համահայկական բազմաթիվ կառույցների բազմաբնույթ ծրագրերը: Միաժամանակ, ՀՀ սփյուռքի նախարարությունը մշակում և իրականացնում է մի շարք պետական ծրագրեր, որոնք ուղղված են հայապահպանությանը, հայրենիք-սփյուռք գործակցության ընդլայնմանը: Այսօր անհրաժեշտություն է առաջացել խորացնելու կապերը նախարարության և համահայկական կառույցների, իրավական հիմքեր ստեղծելու համատեղ ու երկարատև համահայկական ծրագրերի իրականացման համար:</p> <p>2. Ակնկալվող արդյունքը</p> <p>Համահայկական կառույցների հետ իրականացվող համատեղ ծրագրերի ընդլայնումը կնպաստի համահայկական միասնական բարենպաստ միջավայրի ձևավորմանն ու զարգացմանը, հայկական համայնքներում ազգային ինքնության պահպանմանն ու արմատավորմանը, հայապահպան գործունեությանը, մշակութային ժառանգության պահպանմանը, պաշտպանմանը, զարգացմանը: Արդյունքում Հայաստանի հետ սփյուռքահայության, հայկական կառույցների կապերը կամրապնդվեն և կզարգանան, նոր թափ կստանա Հայաստան-սփյուռք գործակցությունը, կընդլայնվի համահայկական ծրագրերի մշակման ու իրականացման գործում անհատների, հայկական կազմակերպությունների մասնակցության շրջանակը, կկատարվագործվի նաև սփյուռքի համար մասնագետների պատրաստման և վերապատրաստման համակարգը:</p>
23.	<p>Հայաստանում սփյուռքահայերի ինտեգրման ծրագրերի իրականացում</p> <p>1. Անհրաժեշտությունը (նպատակը)</p> <p>Վերջին շրջանում հաճախակիացել են տարբեր հայահոծ համայնքներից սփյուռքահայերի տեղափոխումը Հայաստան, որը պայմանավորված է այդ երկրներում տիրող քաղաքական իրավիճակով, քաղաքացիների անվտանգությանն սպառնացող վտանգով: Հայաստանում սփյուռքահայերի ինտեգրման տարաբնույթ ծրագրերի մշակումն ու իրականացումը հնարավորություն են տալու նրանց համար՝ որպես մասնագետներ, ուսանողներ ինքնադրսևորման նպատակով պայմաններ ստեղ-</p>

	<p>ծելու: Նախատեսվում է, հաշվի առնելով Հայաստան ժամանած սփյուռքահայերի պահանջներն ու կարիքները, անհրաժեշտության դեպքում նրանց ինտեգրումը դյուրացնող իրավական ակտերի նախագծերի մշակում և ներկայացում ՀՀ կառավարություն:</p> <p>2. Ակնկալվող արդյունքը</p> <p>Հայաստանում սփյուռքահայերի ինտեգրման ծրագրերի իրականացման արդյունքում կմշակվեն ու իրականություն կդառնան սփյուռքահայերի կրթական, մշակութային ինտեգրմանը նպաստող բազմաթիվ ծրագրեր, անհրաժեշտ աջակցություն կցուցաբերվի սփյուռքահայ դպրոցականների և ուսանողների կրթական գործընթացի կազմակերպմանը: Նախատեսվում է գործուն աջակցություն ցուցաբերել Աշտարակում սիրիահայերի համար «Նոր Հավեյ» թաղամասի կառուցմանը: Ակնկալվում է նաև խրախուսել Հայաստան տեղափոխված սփյուռքահայերի ծրագրային նախաձեռնությունները, օժանդակել Հայաստանում գործող սփյուռքահայերի հասարակական միավորումներին՝ հնարավորություն ընձեռելով սեփական ուժերով լուծելու ինտեգրման հետ կապված խնդիրները:</p>
24.	<p>Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումները համակարգող տարածաշրջանային հանձնախմբերի աշխատանքների համակարգման ծրագրերի իրականացում</p> <p>1. Անհրաժեշտությունը (նպատակը)</p> <p>ՀՀ Նախագահի 2011 թվականի ապրիլի 23-ի ՆՀ-67-Ա հրամանագրով ստեղծվել է Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումները համակարգող պետական հանձնաժողով և հրամանագրի 3-րդ կետով Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարին հանձնարարվել է աջակցել սփյուռքում Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումները համակարգող տարածաշրջանային հանձնախմբերի կողմից իրականացվող աշխատանքներին և, բացի դրանից, հանձնարարվել է նաև համակարգել տարածաշրջանային հանձնախմբերի աշխատանքը: Սույն ծրագրի իրականացումը հնարավորություն կտա իրականացնելու վերոնշյալը և խթանելու Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման և դատապարտման գործընթացը, համակարգելու Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումները համակարգող տարածաշրջանային հանձնախմբերի աշխատանքները, մարդկության ուշադրությունը սևեռելու հայրենագրկված</p>

	<p>և ցեղասպան եղած ազգի իրավունքներին, հետևանքների վերացմանը:</p> <p>2. Ակնկալվող արդյունքը</p> <p>Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է աջակցել սփյուռքում Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումները համակարգող տարածաշրջանային հանձնախմբերի աշխատանքների իրականացմանը, նրանց աշխատանքների համադրմանն ու համակարգմանը, ապահովել պետական հանձնաժողովի հետ դրանց արդյունավետ փոխգործակցությունը, ակտիվացնել ցեղասպանությանը նվիրված համայնքային աշխատանքները՝ միավորելով համայնքային ներուժը՝ ուշադրության կենտրոնում պահելով սփյուռքահայ երիտասարդությանը, նպաստել սփյուռքյան կառույցների ներկայացուցիչների աշխատանքների ակտիվացմանը, կազմակերպել ցեղասպանության թեմայով հետազոտություններ, թարգմանել և տարածել պատմական, իրավական և արխիվային նյութեր, հրատարակման նպատակով հավաքագրել ցեղասպանված ընտանիքների պատմությունները, հայագիտական կենտրոններում և համալսարաններում գիտահետազոտական թեմաներ նվիրել ցեղասպանությանը և կազմակերպել համաժողովներ, քննարկումներ, հանդիպումներ:</p>
<p>Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն</p>	
<p>25.</p>	<p>Հայաստանի Հանրապետության առողջապահության ոլորտում կոռուպցիոն ռիսկերի կրճատման ու բժշկական օգնության և սպասարկման որակի բարելավման միջոցառումների իրականացում</p> <p>1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)</p> <p>Գերակա խնդրի նպատակը Հայաստանի Հանրապետության առողջապահության ոլորտում ֆինանսական կառավարման արդյունավետության բարձրացումն ու բժշկական օգնության և սպասարկման որակի բարելավումն են: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ պետական պատվեր իրականացնող կազմակերպությունների աշխատանքներում առկա են բազմաթիվ բացասական դրսևորումներ, ինչն ազդում է ինչպես բժշկական օգնության որակի, այնպես էլ՝ ֆինանսական կառավարման գործընթացի վրա, գերակա խնդրի իրականացման շրջանակներում առաջարկվում է համալիր միջոցառումների իրականացում (հիվանդանոցային բուժօժանոցայինությունների որակի ապահովման ռազմավարության մշակում, վճարովի ծառայություններից ստացվող եկամուտների և հարկային պարտավորությունների ցուցանիշների մշտադիտարկումների իրականացում,</p>

	<p>պետական պատվերի տեղադրման ընթացքում տարբեր սահմանափակումների սահմանում՝ ըստ թեժ գծի և մշտադիտարկումների արձանագրած արդյունքների, վարձատրման դրույքային ու խրախուսական եղանակների համադրման միջոցով հիվանդանոցային բուժանձնակազմի վարձատրման սկզբունքների վերանայում, դրանց չպահպանման դեպքում պատասխանատվության մեխանիզմների սահմանում, առողջության առաջնային պահպանման գործառույթ իրականացնող բուժանձնակազմի կատարողականի գնահատման ցուցանիշների վերանայում և խրախուսական վարձատրությանն ուղղվող միջոցների ավելացում և այլն), ինչը թույլ կտա բարձրացնել բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների պատասխանատվությունը, հաշվետվողականությունը և թափանցիկությունը, ավելի որակյալ ծառայությունների մատուցման գործում բուժանձնակազմի շահագրգռվածությունը:</p> <p>2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը</p> <p>Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող բժշկական կազմակերպությունների ֆինանսական կառավարման արդյունավետության բարելավում, բժշկական օգնության որակի բարձրացում, վճարովի ծառայություններից ստացվող եկամուտների աճ, ՀՀ պետական բյուջե վճարվող հարկերի ավելացում:</p>
<p>26.</p>	<p>Մարզային բժշկական հաստատությունների վերազինում և վերանորոգում և (կամ) կառուցում առողջապահական համակարգի արդիականացման և օպտիմալացման շրջանակներում</p> <p>1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)</p> <p>ՀՀ մարզային առողջապահության համակարգերի զարգացման նպատակը բնակչությանը տրամադրվող բժշկական ծառայությունների որակի և մատչելիության բարձրացումն է: Ներկայումս ՀՀ մարզերի առողջապահական համակարգը շարժվում է զարգացման ուղիով. վերանորոգվել են ՀՀ մարզային բազմաթիվ բժշկական կենտրոններ (Իջևանում, Հրազդանում, Ապարանում, Արարատում, Արմավիրում, Գորիսում, Գավառում, Արովյանում, Ալավերդիում), ինչպես նաև Գյումրիում կառուցվել է նոր բժշկական կենտրոն: Շուրջ 162 առողջության առաջնային պահպանման հաստատությունների շենքեր նույնպես վերանորոգվել կամ կառուցվել են: Բժշկական հաստատությունները հագեցվել են արդի բժշկական սարքավորումներով և</p>

	<p>անհրաժեշտ կահույքով: Այնուամենայնիվ, դեռ շատ են անմխիթար պայմաններում աշխատող բժշկական հաստատությունները, որոնց թե՛ շենքային վիճակը և թե՛ տեխնիկական հագեցվածությունը չեն բավարարում միջազգային նորմերը: Նշվածը, անկասկած, անդրադառնում է նաև մատուցվող բժշկական ծառայությունների որակի վրա:</p> <p>2. Գերակա խնդրի լուծման արդյունքում ակնկալվող արդյունքը</p> <p>Ոլորտի հետագա զարգացման և արդիականացման նպատակով 2014 թվականի ընթացքում նախատեսվում է շարունակել իրականացնել մարզային բժշկական հաստատությունների վերանորոգման (կառուցման) և հագեցման աշխատանքներ: Մասնավորապես, կվերանորոգվեն և շահագործման կհանձնվեն Բերդի, Մեծամորի բժշկական կենտրոնները: ՀՀ առողջապահության նախարարության և Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի միջոցներով նախատեսվում է վերանորոգել նաև Ճամբարակի առողջության կենտրոնը և «Գյումրու պատալոգոնատոմիական լաբորատորիա» ՓԲԸ-ի համար կառուցել նոր շենք: Կշարունակվեն Մեղրու բժշկական կենտրոնի նոր շենքի կառուցման, ինչպես նաև Կապանի բժշկական կենտրոնի շենքերի վերանորոգման շինարարական աշխատանքները: Մի շարք մարզային բժշկական կենտրոններ, մասնավորապես, Ալավերդիում և Աբովյանում, կհագեցվեն բժշկական և ավստորոշիչ սարքավորումներով, նոր բժշկական և պալատային կահույքով և այլ անհրաժեշտ պարագաներով: Անհրաժեշտ կահույք կտրամադրվի նաև շուրջ 21 բժշկական ամբուլատորիաների: Առողջապահական համակարգի առաջնային օղակը զարգացնելու նպատակով ևս գյուղական 5 համայնքում կավարտվեն նոր ամբուլատորիաների կառուցման և մեկ ամբուլատորիայի վերանորոգման շինարարական աշխատանքները, մեկ համայնքում էլ կսկսվի ամբուլատորիայի կառուցման մեկնարկը:</p> <p>Գերակա խնդրի լուծման արդյունքում կբարձրանա մատուցվող բժշկական ծառայությունների որակը, մատչելիությունը, ինչպես նաև դիմելիությունը բժշկական հաստատություններ: Նշվածի արդյունքում ակնկալվում է մարզերում հանրային առողջության հիմնական ցուցանիշների բարելավում:</p>
<p>27.</p>	<p>Հայաստանի Հանրապետությանում արյունաբանական և ուռուցքաբանական բժշկական օգնության և սպասարկման որակի բարելավման նպատակով միջազգային ցուցանիշներին համապատասխան ենթակառուցվածքների ստեղծում</p>

1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)

Վերջին տարիներին ՀՀ բնակչության շրջանում քաղցկեղով և արյունաբանական հիվանդություններով հիվանդացությունը նկատելիորեն աճել է:

2010 թվականին 2004 թվականի համեմատ արձանագրվել է քաղցկեղով հիվանդացության շուրջ 23 տոկոս աճ (192.1-ից մինչև 233.2-ը՝ 100.000 բնակչի հաշվով):

Օնկոհեմատոլոգիական հիվանդություններով հիվանդացությունը ևս զգալիորեն աճել է: Մասնավորապես, 2003 թ. գրանցվել է 10.8 հիվանդ՝ 100.000 բնակչի հաշվով, 2007 թ.՝ 15.3, 2009 թ.՝ 15.5, իսկ 2010 թ.՝ 16.4 հիվանդ:

Զգալի վատթարացում է նկատվում նաև այլ վիճակագրական տվյալների առումով՝ քաղցկեղի տարածվածությունը վերջին տարիներին աճել է՝ 2004 թ. 0.83 տոկոսից 2009 թ. հասնելով 0.93 տոկոսի, իսկ մահացությունը՝ 4.497 դեպքից (139.9՝ 100.000 բնակչի հաշվով) 2004 թ. աճել է մինչև 5.501 դեպքի (168.9՝ 100.000 բնակչի հաշվով)՝ 2010 թ. մահացության պատճառների մեջ գրավելով երկրորդ տեղը՝ սիրտ-անոթային հիվանդություններից հետո:

Ներկայումս ՀՀ-ում ոչ վարակիչ հիվանդությունների պատճառով մահացության տոկոսն ամենաբարձրն է ընդհանուր մահացության կառուցվածքում:

Հեմատոլոգիական և ուռուցքաբանական հիվանդությունների բուժման արդյունավետության առումով կարևոր նշանակություն ունեն համապատասխան ենթակառուցվածքների և ժամանակակից սարքավորումների առկայությունը, ինչպես նաև միջազգային չափանիշներին համապատասխանող բուժման մեթոդների կիրառումը: Ներկայումս գործող բուժաստատությունների ֆիզիկական վիճակը, առկա ենթակառուցվածքները չեն համապատասխանում արդի պահանջներին, բժշկական սարքավորումները հնամաշ են և կարիք ունեն արդիականացման: Հայաստանում թե՛ հեմատոլոգիական և թե՛ ուռուցքաբանական ոլորտներում առայժմ ներդրված չեն բուժման միօրինականացված պրոտոկոլներ և ստանդարտներ:

2. Գերակա խնդրի բուժման արդյունքում ակնկալվող արդյունքը

Հաշվի առնելով ՀՀ-ում վերջին տարիներին հեմատոլոգիական և օնկոլոգիական հիվանդություններով հիվանդացության, տարածվածության և մահացության ցուցանիշների զգալի աճը, ինչպես նաև նշված բնագավառներում մատուցվող ծառայությունների արդիականացման անհրաժեշտությունը՝ ՀՀ կառավարու-

	<p>թյունը նախատեսում է բարելավել հեմատոլոգիական և օնկոլոգիական բնագավառներում մատուցվող ծառայությունների որակը՝ արյունաբանական կենտրոնի արդիականացման և կենտրոնում ուկրաժուժի փոխպատվաստման նոր բաժանմունքի ստեղծման, ինչպես նաև Հայաստանում նոր, միջազգային չափանիշներին համապատասխանող ուռուցքաբանության կենտրոնի ստեղծման միջոցով:</p> <p>ՀՀ-ում առողջապահական ոլորտի արդիականացման և ոչ վարակիչ հիվանդությունների հետևանքով մահացության մակարդակի նվազեցման նպատակով Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող նոր վարկային ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել ուռուցքաբանության և հեմատոլոգիական ոլորտի արդիականացման ծրագիր:</p> <p>Ուռուցքաբանության ոլորտի արդիականացման ծրագիրը կիրականացվի Երևան քաղաքում: 2014 թվականին նախատեսվում է մրցությային կարգով ընտրել նախագծող կազմակերպություն և պատվիրել ժամանակակից չափանիշներին համապատասխանող ուռուցքաբանության գերազանցության կենտրոնի ճառագայթային բուժման, ինչպես նաև հիվանդանոցային մասնաշենքի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակումը:</p> <p>Հեմատոլոգիական ոլորտի արդիականացման և ուկրաժուժի փոխպատվաստման նոր բաժանմունքի ստեղծման ծրագիրը ևս կիրականացվի Երևան քաղաքում: 2014 թվականին նախատեսվում է սկսել արյունաբանական կենտրոնի ուկրաժուժի փոխպատվաստման նոր բաժանմունքի ստեղծման նպատակով բաժանմունքի նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքները:</p>
28.	<p align="center">Հայաստանի Հանրապետության առողջապահության ոլորտում միասնական էլեկտրոնային տեղեկատվական համակարգի ներդրում</p> <p align="center">1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)</p> <p>ՀՀ առողջապահության ոլորտում միասնական էլեկտրոնային տեղեկատվական համակարգի ներդրման աշխատանքների իրականացումը պայմանավորված է ժամանակակից առողջապահական տեղեկատվական համակարգ ունենալու անհրաժեշտությամբ, ինչն էականորեն կնպաստի առողջապահության բնագավառի համապարփակ արդիականացմանը, ծախսերի կրճատմանն ու ռեսուրսների խնայողությանը և արդյունքում բնակչությանն առավել որակյալ ծառայությունների տրամադրմանը, բուժօգնու-</p>

	<p>թյան ոլորտում իրականացվող աշխատանքների օպերատիվության բարձրացմանը: Բացի դրանից, նկատի ունենալով այն հանգամանքը, որ համակարգում կհավաքվեն կարևորագույն առողջապահական ցուցանիշներ և տվյալներ, կնպաստի առավել ճշգրիտ ու թիրախային առողջապահական քաղաքականության մշակմանը և իրականացմանը:</p> <p>2014 թվականին նախատեսվում է իրականացնել միասնական էլեկտրոնային տեղեկատվական համակարգի ներդրման հիմնական աշխատանքները՝ էլեկտրոնային տեղեկատվական համակարգի ծրագրային ապահովման աշխատանքների իրականացումը, փորձարարական (պիլոտային) ծրագրի իրականացումը, ինչպես նաև համակարգի ներդրման փուլերի հաստատումը:</p> <p>2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը</p> <p>Առողջապահական ոլորտում միասնական էլեկտրոնային տեղեկատվական համակարգի ներդրման հիմնական աշխատանքների իրականացում ու համակարգի գործարկման նախապատրաստում:</p>
--	---

Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարություն

<p>29.</p>	<p>Հայաստանի Հանրապետության տարածքում վերգետնյա թվային հեռուստահեռարձակման համակարգի ներդրման գործընթացի իրականացում</p> <p>1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)</p> <p>Ինդրի անհրաժեշտությունը պայմանավորված է հեռուստատաղիոհեռարձակման ծառայությունների հետագա ընդլայնմամբ և որակի բարձրացմամբ, ինչը պահանջում է անալոգային տեխնոլոգիաներից անցում նոր տեխնոլոգիաների կիրառմանը, որն ընդհանրական և արդիական է բոլոր երկրների համար:</p> <p>2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը</p> <p>Հայաստանի Հանրապետությունում վերգետնյա թվային հեռուստահեռարձակման համակարգի ներդրումն էապես կբարելավի հեռուստատաղիոհեռարձակման որակը, կապահովվեն հեռուստատաղիոհեռարձակման լայն հասանելիությունը և մատչելիությունը, հաճախականությունների տիրույթների արդյունավետ օգտագործումը, հեռուստատաղիոհեռարձակման և տեղեկատվական ցանցերի համակցելիությունը և տեղեկատվության ոլորտում կիրառվող տեխնիկական միջոցների համատեղելիությունը:</p>
------------	---

30.	<p>Հեռահաղորդակցության ոլորտում ծառայությունների աշխարհագրության ընդլայնում և նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ առաջարկվող ծառայությունների բազմազանության և միջազգային չափանիշներին համապատասխան բարձր որակի ապահովում, մասնավորապես, բնակչության առնվազն 50 տոկոսի կողմից համացանցի օգտագործման հնարավորության ապահովում</p> <p>1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը) Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում բնակչության մոտավորապես 50 տոկոսի կողմից համացանցի օգտագործման հնարավորության ապահովում:</p> <p>2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը Հայաստանի Հանրապետությունում գործող օպերատորների հետ քննարկումների կազմակերպում, որի արդյունքում վերջիններիս կողմից կիրականացվեն համապատասխան միջոցառումներ՝ բնակչության մոտավորապես 50 տոկոսի կողմից համակարգչի միջոցով համացանցի օգտագործման հնարավորության ապահովման համար:</p>
31.	<p>Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի Տրանշ 1 (Երևան-Աշտարակ, Երևան-Արարատ), Տրանշ 2 (Աշտարակ-Թալին) շինարարական աշխատանքների կատարման շարունակություն, Տրանշ 3-ի (Թալին-Գյումրի) մեկնարկ, Տրանշ 4-ի նախապատրաստական աշխատանքներ</p> <p>1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը) Նշված խնդիրն ուղղված է Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի Տրանշ 1 (Երևան-Աշտարակ, Երևան-Արարատ), Տրանշ 2 (Աշտարակ-Թալին) շինարարական աշխատանքների իրականացմանը՝ աշխատանքների կատարման ժամանակացույցին համապատասխան և ճանապարհաշինական աշխատանքներն սկսելու նպատակով Տրանշ 3-ի շինարարական աշխատանքների մեկնարկին: Ակնկալվում են նաև Տրանշ 4-ի նախապատրաստական աշխատանքներ:</p> <p>2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը Ծրագրի իրականացումը հնարավորություն կտա ամբողջացնելու Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի</p>

	<p>Արարատ-Բավրա հատվածում ժամանակակից չափանիշները բավարարող ավտոմոբիլային ճանապարհ ունենալու հեռանկարը:</p>
<p>32.</p>	<p align="center">Ճանապարհների կառավարման համակարգի կատարելագործմանն ուղղված ինստիտուցիոնալ կարողությունների ձևավորում</p> <p>1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը) Ճանապարհների կառավարման համակարգում ընդգրկվող կառուցվածքային միավորների լիազորությունների շրջանակի և կազմակերպչական կառուցվածքի սահմանում:</p> <p>2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը Ճանապարհային ցանցի կառավարման արդյունավետության բարձրացում:</p>
<p>33.</p>	<p align="center"><u>Հայաստանի Հանրապետության 71,4 E տիեզերական գեոստացիոնար ուղեծրի Հեռահաղորդակցության միջազգային միությունում հայտի գրանցում և ապագա արբանյակի սպասարկման տարածքի համակարգում (կոորդինացիա) շահագրգիռ երկրների հետ</u></p> <p>1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը) Նախատեսվող ծրագրի իրականացումը մեծ նշանակություն ունի Հայաստանի Հանրապետության հեռահաղորդակցության բնագավառի նոր, ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման հարցում, մասնավորապես, հեռուստահեռարձակման, լայնաշերտ ինտերնետի ներդրման և կապի տեխնոլոգիաների զարգացման հարցում:</p> <p>2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը Հայաստանի Հանրապետության 71,4 E տիեզերական գեոստացիոնար ուղեծրի Հեռահաղորդակցության միջազգային միությունում հայտի գրանցում և ապագա արբանյակի սպասարկման տարածքի համակարգում մեծ նշանակություն ունի ապագայում ստեղծվող արբանյակի շահագործման տնտեսական արդյունավետության բարձրացման գործում: Ակնկալվում է համաձայնություններ ձեռք բերել շահագրգիռ երկրների հետ՝ իրենց տարածքում հայկական արբանյակի հեռարձակման թույլտվությունների տրամադրման համար:</p>
<p>Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարություն</p>	
<p>34.</p>	<p align="center">Հայաստանի Հանրապետությունում շենքերի և</p>

շինությունների տեխնիկական տվյալների բազայի շարունակական համալրում

1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)

Հանրապետությունում մինչև սեյսմակայուն շինարարության նոր նորմերի ընդունումը նախագծված ու կառուցված շենքերը և շինությունները չեն բավարարում սեյսմակայունության արդի պահանջները, ինչի հետևանքով զգալիորեն աճել է սեյսմիկ ռիսկի մեծությունը: Իրավիճակի սրմանը մեծապես նպաստում է նաև այն, որ վերջին 15-20 տարվա ընթացքում հանրապետությունում շենքերի և շինությունների շահագործման ոլորտում անհրաժեշտ մակարդակով չեն ցուցաբերվել համակարգված մոտեցումներ, և պահանջվող ծավալներով չեն իրականացվել հիմնանորոգման, վերականգնման աշխատանքներ, որի հետևանքով ֆիզիկական մաշվածությունից և զանազան այլ գործոնների ազդեցությունից դրանց զգալի մասը հայտնվել է անբավարար կամ վթարային տեխնիկական վիճակում:

Քիչ չեն այն շենքերը, որոնցում առկա ընթացիկ վերանորոգում պահանջող թերությունների (ջրագծի կամ կոյուղագծի վնասվածքներ, տանիքի և ջրահեռացման համակարգի անբարեկարգ վիճակ, սավվածքի քայքայվածություն և այլն) ոչ ժամանակին վերացումը կարող է հանգեցնել շենքի անբավարար տեխնիկական վիճակի, իսկ հետագայում՝ նաև վթարայնության առաջացմանը:

Նշված հանգամանքներով պայմանավորված՝ կարևորվում է շենքերի և շինությունների, այդ թվում կրթական, մշակութային և մարզական օբյեկտների նկատմամբ համակարգված ծրագրային մոտեցումների ցուցաբերումը, որի արդյունավետությունը մեծապես կախված է տեխնիկական տվյալների լիարժեք բազայի առկայությունից:

Տեխնիկական տվյալների բազայի շարունակական համալրումը հնարավորություն կտա ունենալու լիարժեք տվյալներ, որոնց վերլուծության արդյունքում կխմբավորվեն առկա խնդիրներն ըստ առաջնահերթության, և կմշակվեն շենքերի ու շինությունների պահպանմանը, վերակառուցմանը և անվտանգ շահագործմանը նպատակաուղղված հիմնավորված ծրագրային առաջարկներ:

Գերակա խնդիրն իրականացվում է Հայաստանի Հանրապետության բնակարանային ֆոնդի գույքագրման եղանակով դրանց տեխնիկական վիճակի մասին տվյալների բազայի ստեղծման, դրա շարունակական համալրման և համապատասխան վերլուծությունների արդյունքում բնակարանային ֆոնդի պահպանման վերաբերյալ առաջարկությունների մշակ-

	<p>ման համար ՀՀ քաղաքաշինության նախարարի 2012 թվականի հուլիսի 27-ի N 161 հրամանով ստեղծված աշխատանքային խմբի գործունեության շրջանակներում, որի համար 2014 թվականին ֆինանսավորում չի պահանջվում:</p> <p>2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը</p> <p>Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվում է շենքերի և շինությունների տեխնիկական տվյալների բազայի համալրում: 2014 թվականին նախատեսվում է հավաքագրել և համակարգչային ծրագրում մուտքագրել առնվազն 2000 շենքի տեխնիկական տվյալները: Ծրագիրը հետագա տարիներին շարունակականորեն կհամալրվի:</p> <p>Շենքերի տեխնիկական տվյալների լիարժեք բազայի առկայությունը հնարավորություն կտա՝</p> <ol style="list-style-type: none"> 1) առանձնացնելու անբավարար ու վթարային տեխնիկական վիճակում գտնվող շենքերը, շինությունները և տվյալների վերլուծության արդյունքում մշակելու դրանց հիմնանորոգման, վերականգնման և ուժեղացման միջոցառումների կամ վթարային շենքերից բնակիչների վերաբնակեցման հիմնավորված ծրագրեր. 2) հայտնաբերելու ընթացիկ վերանորոգում պահանջող շենքերն ու շինությունները, որոնցում առկա վնասվածքների ոչ ժամանակին վերացումը կարող է հանգեցնել շենքի անբավարար տեխնիկական վիճակի կամ վթարայնության առաջացման, և անհրաժեշտ վերլուծությունների արդյունքում մշակելու շենքերի պահպանման արդյունավետ միջոցառումների ծրագրեր. 3) հիմնանորոգման, վերականգնման, ուժեղացման և ընթացիկ վերանորոգման համար որոշելու շենքերի առաջնահերթությունը:
35.	<p>Մայրաքաղաքի կենտրոնի ձևավորված ճարտարապետական դիմագծի միասնականությունը, կենսամիջավայրի գեղագիտական հատկանիշների կատարելագործումն ապահովող կառուցապատման օրենսդրական կանոնակարգում</p> <p>1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)</p> <p>Երևանի և, հատկապես, նրա կենտրոնի կառուցապատման կանոնակարգման, ինչպես նաև մայրաքաղաքի նկարագրի անհարիր կառուցապատումը բացառելու նպատակով նախատեսվում է բազմաբնույթ գործընթացների կատարելագործման նպատակ հետապնդող «Երևանի փոքր կենտրոնի կառուցապատման մասին» ՀՀ օրենքի և դրանից բխող մի շարք օրենքներում փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին օրենքի (օրենսդրական փաթեթի) նախագծի ընդունումը:</p>

	<p>Հինք ընդունելով ՀՀ կառավարության 2013 թվականի մարտի 7-ի N 9 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած «Երևանի փոքր կենտրոնի կառուցապատման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի հայեցակարգը և ելնելով Երևանի փոքր կենտրոնի առանձնահատկությունների՝ նախատեսվում է ամրագրել դրանցից բխող՝ կառուցապատման, կառավարման գործընթացների կանոնակարգման վերաբերյալ քաղաքաշինական հատուկ մոտեցումներ:</p> <p>2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը</p> <p>Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվում է մայրաքաղաքի քաղաքաշինական դիմագծի ձևավորման վրա գերիշխող ազդեցություն ունեցող տարածական գոտում կառուցապատման գործառնությունների իրական բարելավման նախադրյալների ստեղծում փոքր կենտրոնում պետական քաղաքաշինական քաղաքականության հիմնադրությունների ամրագրմամբ՝ կառուցապատման գործառնությունների իրականացման հատուկ պայմանների և պահանջների սահմանման միջոցով:</p>
<p>36.</p>	<p>Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող կիսակառույց և չհահագործվող շենքերի ու շինությունների հաշվառման շտեմարանի համալրում և շինարարական աշխատանքներն ավարտին հասցնելու վերաբերյալ առաջարկությունների մշակում</p> <p>1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)</p> <p>Հանրապետությունում առկա անավարտ օբյեկտների հիմնական մասի շինարարական աշխատանքներն սկսվել են 1990-ական թվականներին և մնացել են անավարտ: Անհրաժեշտություն է առաջացել իրականացնելու ՀՀ մարզերում առկա՝ պետական և համայնքային սեփականություն հանդիսացող անավարտ օբյեկտների գույքագրման աշխատանքները՝ պետական և համայնքային սեփականություն հանդիսացող կիսակառույց շենքերի ու շինությունների հետագա քայքայումը կանխելու և դրանց շինարարական աշխատանքներն ավարտին հասցնելու վերաբերյալ առաջարկություններ մշակելու նպատակով:</p> <p>Անավարտ օբյեկտների գույքագրման արդյունքների ամփոփումից հետո՝ անավարտ օբյեկտների տեխնիկական վիճակի հետազննության աշխատանքները (շուրջ 15.0 միլիոն դրամ) հնարավոր է իրականացնել ՀՀ քաղաքաշինության նախարարության գնումների գործընթացների արդյունքում տնտեսված միջոց-</p>

	<p>ների հաշվին:</p> <p>2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը Կիսակառույց շենքերի ու շինությունների մասին տեղեկատվական շտեմարանի ստեղծում, որի հիման վրա կմշակվեն առաջարկներ յուրաքանչյուր կիսակառույց օբյեկտի շինարարական աշխատանքներն ավարտին հասցնելու վերաբերյալ: Ակնկալվում է արդյունքում յուրաքանչյուր մարզում ունենալ սոցիալական բնակարաններ:</p>
Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն	
37.	<p>Հանրակրթության արդյունավետության բարելավում</p> <p>1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը) Գերակա խնդրի անհրաժեշտությունը պայմանավորված է հանրակրթության որակի բարելավմամբ:</p> <p>2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը</p> <ol style="list-style-type: none"> 1) երաշխավորված նվազագույն իննամյա կրթությունից անվճար տասներկուամյա (ներառյալ՝ մասնագիտական) կրթությանն անցում. 2) դպրոցներում փորձարկում անցած դասագրքերի՝ ուսուցիչներից ստացված կարծիքների հիման վրա հեղինակային խմբի կողմից լրամշակում և խմբագրում. արդյունքում՝ դպրոց կմտնեն որակյալ դասագրքեր. 3) կվարկանիշավորվեն հանրակրթական ուսումնական հաստատությունները. 4) Հայաստանի Հանրապետությունում կներդրվի ուսումնական համակարգիչների արտադրություն. 5) կմշակվեն «Ազգային երգ ու պար» առարկայի չափորոշիչն ու ծրագիրը:
38.	<p>Ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների համար դպրոցներում ուսումնական բազայի բարելավում և կադրերի մասնագիտական զարգացում</p> <p>1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը) Գերակա խնդրի անհրաժեշտությունը պայմանավորված է ազգային փոքրամասնությունների դպրոցահասակ երեխաների՝ որակյալ հիմնական կրթություն ստանալու հնարավորությունների ընդլայնմամբ:</p>

	<p>2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը</p> <p>Ազգային փոքրամասնությունների դպրոցների համար կտպագրվի 2 անուն դասագիրք (քրդերեն): Մանկավարժական կադրերի մասնագիտական որակավորման բարձրացման նպատակով նախատեսվում է կազմակերպել ազգային փոքրամասնությունների դպրոցների շուրջ 20 ուսուցչի վերապատրաստման դասընթացներ:</p>
39.	<p>Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության համակարգի ինստիտուցիոնալ կարողությունների հզորացում</p> <p>1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)</p> <p>Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտում իրականացվող բարելոխումներն ուղղված են կրթության որակի բարելավմանն ու մատչելիության բարձրացմանը, կառավարման համակարգի արդյունավետության զարգացմանը, ինչպես նաև կրթական համակարգերի ճկունությանն ու շարունակական զարգացմանն ապահովմանը:</p> <p>Հայաստանում նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտի նպատակն աշխատաշուկայի պահանջներին միտված մասնագիտական կրթության և կրթական ծառայությունների մատուցման որակի ապահովումն է, որը կարող է իրականացվել բարձրակարգ մանկավարժական կադրերի և ղեկավար անձնակազմի միջոցով, ինչպես նաև՝ եվրոպական մասնագիտական կրթության համակարգին ինտեգրումը:</p> <p>2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը</p> <p>Մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈԻ) ոլորտի ընդհանուր արդիականացում, որը դրական ազդեցություն կունենա Հայաստանում աշխատաշուկայի և զբաղվածության զարգացման վրա:</p> <p>ՄԿՈԻ-ի համակարգում կառավարման արդյունավետության բարձրացումը, մանկավարժների և կառավարիչների կարողությունների հզորացումը, ուսուցման իրականացումը կրեդիտային համակարգով, ինչպես նաև միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում մասնագիտական կողմնորոշման և կարիերայի զարգացման համար անհրաժեշտ խորհրդատվական ծառայությունների մատուցումը կնպաստեն կրթության և աշխատաշուկայի միջև կապի ամրապնդմանը, ուսումնական հաստատություն - գործատու գործընկերության բարելավմանը, տնտեսության տարբեր ոլորտների՝ բարձրորակ մասնագիտական կադրերով</p>

	համալրմանը:
40.	<p>Բարձրագույն մասնագիտական կրթության համակարգի զարգացում և արդյունավետության բարձրացում</p> <p>1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)</p> <p>Գերակա խնդրի անհրաժեշտությունը պայմանավորված է Հայաստանում տեխնոլոգիաների և նորարարության զարգացմամբ, գիտելիքահեն հասարակության կազմավորմամբ, բարձրագույն կրթության ֆինանսավորման համակարգի բարելավմամբ, ինչպես նաև ՀՀ բարձրագույն կրթական համակարգը եվրոպական կրթական տարածքի ինտեգրմամբ և ճանաչելիությամբ:</p> <p>2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը</p> <p>Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի որակավորումների (QF-EHEA) շրջանակին համադրելի որակավորումների ազգային շրջանակ: Կրթության միջազգային դասակարգումը (ISCED), համապատասխան մասնագիտությունների նոր ցանկը և լրամշակված շնորհվող նոր որակավորումները կնպաստեն ՀՀ բարձրագույն կրթության միջազգայնացմանը, իրականացվող կրթական ծրագրերի՝ ըստ կրթության յուրաքանչյուր ոլորտի և կրթական աստիճանի և նրանց շնորհվող որակավորումների կանոնակարգմանը:</p> <p>Կրթական ծրագրերի (մասնագիտությունների) դասակարգման գործընթացը կապահովի մասնագիտությունների և դրանց շնորհվող որակավորումների համադրելիությունը միջազգային վիճակագրության չափանիշներին:</p> <p>Որակավորումների ոլորտային շրջանակի մշակման արդյունքում կմշակվեն և կհստակեցվեն իրականացվող կրթական ծրագրերի վերջնական արդյունքները, որոնք իրենց հերթին ուղղված կլինեն և կբխեն աշխատաշուկայի պահանջներից:</p> <p>Բարձրագույն կրթության սոցիալական համակարգի ուսումնասիրությունները կնպաստեն սոցիալական ոլորտի բարելավմանը, քաղաքականության արդյունավետ մշակմանը: Ուսումնասիրությունների արդյունքում կհավաքագրվի տեղեկատվություն առկա իրավիճակի մասին, ինչը բարենպաստ հիմք կստեղծի սոցիալական ոլորտի ռազմավարության հստակեցման համար:</p> <p>Հայաստանի Հանրապետությունում համալսարանների աստիճանակարգման և դասակարգման համակարգի մշակումն ու իրագործումը հնարավորություն կտան ներկայացնելու Հայաստանի բարձրագույն կրթության համակարգի բնութագիրը՝ դյուրընկթեռնելի և համընդհանուր հասկանալի ձևով՝ որոշակի կառուցվածքի մեջ:</p>

	<p>Բացի դրանից՝ այն զգալի ազդեցություն կունենա Եվրոպայի բարձրագույն կրթական տարածքում Հայաստանի բարձրագույն կրթության ինտեգրման գործընթացի վրա, ինչպես նաև կստեղծի ազգային բուհերի՝ Եվրոպական մակարդակում մրցունակ լինելու լուրջ նախադրյալներ:</p> <p>Վարկանիշավորումը և դասակարգումը կստեղծեն բարձրագույն կրթություն տրամադրող հաստատությունների վերաբերյալ համապարփակ և թափանցիկ դասակարգման համակարգ՝ բուհերի հաշվետվողականությունը և թափանցիկությունը բարձրացնելու նպատակով:</p> <p>Հայաստանում Նորարարությունների մրցակցային հիմնադրամի (ՆՄՀ) ներդրումից ակնկալվում է ունենալ բարձրագույն կրթության համակարգում բուհերի զարգացման ծրագրերի համար հատկացվող գումարների բաշխման արդյունավետ մեխանիզմ, ինչպես նաև նպաստել բուհերի նորարարական նախաձեռնությունների իրականացմանը:</p> <p>Բարձրագույն կրթության բարեփոխումների ուղղություններից է բարձրագույն կրթության կառավարման տեղեկատվական համակարգի շահագործումը, որի նպատակներն են՝</p> <ol style="list-style-type: none"> 1) բարձրացնել մասնագիտական կրթության համակարգի գործունեության արդյունավետությունը. 2) զարգացնել մասնագիտական կրթության համակարգում կառավարման կարողությունները՝ կառավարման բոլոր օղակներում հավաստի տեղեկատվության հիման վրա որոշումներ ընդունելու նպատակով: <p>Կստեղծվի համապատասխան իրավական դաշտ՝ բուհերում ուսման վարձի առավելագույն չափը սահմանելու նպատակով:</p>
41.	<p>Հակակոռուպցիոն համալիր ծրագիր ներկայացնելը</p> <p>1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)</p> <p>Գերակա խնդրի անհրաժեշտությունը պայմանավորված է կրթության ոլորտում կոռուպցիոն ռիսկերի նվազեցմամբ՝ կրթության ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարի կանխարգելիչ միջոցառումների կիրառումը քաղաքացիական հասարակության լայն ներգրավմամբ:</p> <p>2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը</p> <p>Վերլուծական հաշվետվությունների, հանրային քննարկումների և առաջարկությունների հիման վրա կմշակվի հակակոռուպցիոն համալիր ծրագիր, որն ուղղված կլինի կրթության</p>

	<p>յորաքանչյուր մակարդակում առկա կոռուպցիոն ռիսկերի բացահայտմանը, գնահատմանն ու կանխարգելմանը: Միաժամանակ, կսահմանվեն մոնիթորինգային ցուցանիշներ՝ համալիր ծրագրի իրականացման ընդհանուր մոնիթորինգը և գնահատումն իրականացնելու նպատակով:</p>
<p>42.</p>	<p>2. ՀՀ գիտական աստիճանաշնորհման համակարգում չափանիշների հստակեցում</p> <p>1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը) Գերակա խնդրի անհրաժեշտությունը պայմանավորված է գիտական աստիճանաշնորհման համակարգի սկզբունքների ու չափանիշների հստակեցմամբ:</p> <p>2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը</p> <ol style="list-style-type: none"> 1) կլրամշակվի ՀՀ գիտական աստիճանաշնորհման կանոնակարգը, անհրաժեշտ փոփոխություններ կկատարվեն դրանում. 2) կսահմանվեն ատենախոսությունների հիմնական արդյունքների և դրույթների հրապարակման համար գիտական հրատարակություններին ներկայացվող պահանջները, որին համապատասխան կկազմվի գիտական հրատարակությունների ցուցակը և կհրապարակվի. 3) կվերանայվի ՀՀ գիտական աստիճանաշնորհման անվանացանկը, որին համապատասխան կվերանայվեն նաև գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհուրդները: ՀՀ գիտական ներուժին համապատասխանեցնելու նպատակով:
<p>Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն</p>	
<p>43.</p>	<p>Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի Հանրապետության անդամակցելու համար գյուղատնտեսության ոլորտին առնչվող միջոցառումների իրականացում</p> <p>1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը) Գերակա խնդրի նպատակը Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի Հանրապետության անդամակցության հետ կապված պահանջների կիրառման դեպքում գյուղատնտեսության ոլորտի մրցունակության, պարենամթերքի տնտեսական մատչելիության ապահովման միջոցառումների իրականացումն է:</p> <p>2. Գերակա խնդրի իրականացման դեպքում ակնկալվող</p>

	<p>արդյունքը</p> <p>Եվրասիական տնտեսական միության գյուղատնտեսության աջակցության միասնական կանոնների մասին համաձայնագրում համապատասխան փոփոխությունների կատարման միջոցով հանրապետության գյուղատնտեսության մրցունակության ապահովում:</p> <p>Անցումային ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության համար Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային դրույքներից տարբերվող մաքսատուրքերի կիրառման միջոցով գյուղատնտեսության մրցունակության և պարենամթերքի տնտեսական մատչելիության մակարդակի բարձրացում:</p>
44.	<p>Հանրապետության պարենային անվտանգության մակարդակի բարձրացում</p> <p>1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)</p> <p>Ներկայումս հանրապետությունում առաջնահերթ անհրաժեշտ պարենամթերքների ինքնաբավության մակարդակը, էներգետիկ արժեքով գնահատված, կազմում է գրեթե 60 տոկոս: Նշվածի հետ մեկտեղ՝ մի շարք պարենամթերքների ինքնաբավության մակարդակը հանրապետությունում չափազանց ցածր է: Դա հիմնականում վերաբերում է ցորենին, անասնապահական ծագում ունեցող մթերքներին (բացառությամբ մանր եղջերավորների մսի): Հետևաբար, պարենային անվտանգության մակարդակի բարձրացումը կարևորագույն գերակա խնդիր է:</p> <p>2. Գերակա խնդրի իրականացման դեպքում ակնկալվող արդյունքը</p> <p>Կբարձրանա գյուղատնտեսությունում տնտեսավարողների՝ բարձր վերարտադրության սերմերով ապահովվածության մակարդակը, որը բուսաբուծական արտադրանքի ծավալների ավելացման և արդյունավետության բարձրացման կարևոր երաշխիքներից մեկն է:</p> <p>Կբարելավվեն գյուղատնտեսական կենդանիների տոհմային և մթերատու հատկանիշները, արդյունքում կավելանան անասնապահական մթերքների արտադրության ծավալները, կբարձրանա ճյուղի արդյունավետությունը:</p> <p>Ձկնաբուծության ճյուղի արտադրության և արտահանման խթանումը հնարավորություն կտա կրճատելու առողջապահական նորմաներով սահմանված և փաստացի սպառվող մսամթերքի տարբերությունը, որոշակիորեն կբարելավվի գյուղատնտեսական ծագում ունեցող արտադրատեսակների արտաքին ապրան-</p>

	<p>քաշրջանառության հաշվեկշիռը:</p> <p>Կոռպերատիվների ձևավորման փորձնական ծրագրերի իրականացումը հնարավորություն կտա կատարելագործելու գյուղատնտեսության մեջ տնտեսավարման ձևերը, առավել արդյունավետ կազմակերպելու արտադրության և գյուղատնտեսության սպասարկումը:</p>
45.	<p>Մանդամթերքի անվտանգության համակարգի զարգացում</p> <p>1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)</p> <p>Գերակա խնդրի նպատակն անվտանգ սննդամթերքով սպառողների ապահովվածության մակարդակի բարձրացումն է, սննդամթերքի անվտանգության միջազգային չափանիշների ներդրումն ապահովող իրավօրենսդրական ակտերի մշակումն ու ընդունումը, համակարգերի ներդրման գործընթացի կազմակերպումը:</p> <p>2. Գերակա խնդրի իրականացման դեպքում ակնկալվող արդյունքը</p> <p>Կենդանական ծագում ունեցող սննդի և անասնակերի անվտանգության ոլորտի օրենսդրության մոտարկում Մաքսային միության համապատասխան օրենսդրությանը: Կարդիականացվի կենդանական ծագում ունեցող սննդի և անասնակերի անվտանգության վերահսկման պրակտիկան՝ միջազգային չափանիշներին մոտարկման առումով:</p>
46.	<p>Անասնապահության մասնագիտացում ունեցող բարձր լեռնային և սահմանամերձ գյուղական համայնքներին աջակցության շարունակում</p> <p>1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)</p> <p>Հանրապետության բարձր լեռնային և սահմանամերձ գյուղական համայնքներում լիարժեք չի օգտագործվում առկա ռեսուրսային ներուժը: Դա առաջին հերթին վերաբերում է արտադրական բնական ռեսուրսների՝ արոտների, խոտհարքների անբավարար օգտագործմանը: Վերջինիս հետևանքով ցածր են անասնապահության արդյունավետությունը և անասնապահական տնտեսությունների եկամուտների մակարդակը:</p> <p>Ստեղծված իրավիճակը պահանջում է բնական ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացման և անասնապահության ռացիոնալ կազմակերպման միջոցառումների շարունակում: Վերջինս հնարավոր է պետական աջակցության ծրագրերով համակարգված քայլերի իրականացման արդյունքում:</p>

	<p style="text-align: center;">2. Գերակա խնդրի իրականացման դեպքում ակնկալվող արդյունքը</p> <p>Կապահովվի բարձր լեռնային և սահմանամերձ համայնքների հեռագնա արոտների անցանելիությունը, կշարունակվեն արոտների ջրարբիացման և դեգրադացված արոտների վերականգնման, կայթի ընդունման ու վերամշակման կարողությունների ստեղծման աշխատանքները:</p> <p>Հանրապետության մարզերի համայնքներում կիրականացվեն ստեղծված արոտօգտագործողների սպառողական կոոպերատիվների կարողությունների հզորացման միջոցառումներ, կստեղծվեն համապատասխան կադրերով և տեխնիկական միջոցներով հագեցված անասնաբուժական սպասարկման կենտրոններ, կիրականացվեն դաշտային կերարտադրության զարգացման, տոհմային և անասնաբուժական աշխատանքների բարելավման միջոցառումներ:</p> <p>ՀՀ Արագածոտնի, Գեղարքունիքի, Լոռու, Շիրակի, Սյունիքի, Տավուշի մարզերում կհիմնվեն համապատասխան սարքավորումներով հագեցված անասնաբուժական սպասարկման կենտրոններ:</p> <p>Նախադրյալներ կստեղծվեն հանրապետության այլ համայնքներում ընդլայնված ծավալներով՝ նման ուղղվածություն ունեցող ծրագրերի իրականացման շարունակման համար:</p> <p>Արդյունքում կբարելավվի բնական կերահանդակների օգտագործման և դաշտային կերարտադրության վիճակը: Վերջինս կնպաստի անասնապահության արդյունավետության բարձրացմանը, գյուղացիական տնտեսությունների եկամուտների ավելացմանը:</p>
<p>47.</p>	<p style="text-align: center;">Հայաստանի Հանրապետությունից ձկան, ձկնամթերքի և ջրային ծագում ունեցող այլ արտադրանքի՝ Եվրամիության երկրներ արտահանման գործընթացը կանոնակարգող միջոցառումների կազմակերպում և իրականացում</p> <p style="text-align: center;">1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)</p> <p>Գերակա խնդրի նպատակը Հայաստանի Հանրապետությունից Եվրամիության անդամ երկրներ ձկան, ձկնամթերքի և ջրային ծագում ունեցող այլ արտադրանքի արտահանման միջոցառումների ու քայլերի՝ ինչպես ներքին, այնպես էլ՝ արտաքին ընթացակարգերի իրականացումն է: Հետագայում այն կարող է հիմք հանդիսանալ նաև կենդանական ծագում ունեցող այլ ապրանքատեսակների արտահանման համար:</p>

	<p>2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը</p> <p>Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվում է ունենալ ձկան, ձկնամթերքի և ջրային ծագում ունեցող մթերքի մնացորդային մոնիթորինգային պլանին վերաբերող օրենսդրություն, Եվրամիության չափորոշիչներին համապատասխան կոմպետենտ փորձագիտական խումբ և մակարածային հիվանդությունների վերացման ռազմավարական պլան:</p>
48.	<p>«Հայաստանի Հանրապետությունում խոշոր եղջերավոր կենդանիների համարակալման, հաշվառման ու գրանցման ծրագրին և ծրագրի կատարումն ապահովող միջա-ցառումների ժամանակացույցին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագծի ընդունման անհրաժեշտության վերաբերյալ</p> <p>1. Իրավական ակտի անհրաժեշտությունը</p> <p>Նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է հետևյալով. կենդանիների ինդենտիֆիկացումը (համարակալումը) կենդանիների առողջության (այդ թվում՝ զոոանտրոպոնոզ) և սննդամթերքի սանիտարական անվտանգության վերահսկողության համակարգ է: Համակարգի ներդրումը կարող է զգալիորեն բարձրացնել կենդանիների հիվանդությունների վաղ հայտնաբերման, սննդամթերքի սանիտարական անվտանգության, պատվաստման ծրագրերի, կենդանիների տեղաշարժի և հավասարակշռված միջազգային առևտրի գործընթացում վերահսկողության արդյունավետությունը և հետագծելիության ապահովումը:</p> <p>2. Ընթացիկ իրավիճակը և խնդիրները</p> <p>Վայոց ձորի մարզում 2012 թվականին իրականացված խոշոր եղջերավոր կենդանիների համարակալման և անձնագրավորման փորձարկման ծրագրի արդյունքում պարզ դարձավ, որ այդ մարզում առկա փաստացի գլխաքանակը շուրջ 25 տոկոսով ավելի է հակասանահամաճարակային միջոցառումների պլանավորման համար ընտրված ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից հրապարակված պաշտոնական գլխաքանակից, որի արդյունքում կենդանիների շուրջ 25-30 տոկոսը դուրս են մնացել ծրագրից, ինչը հիվանդությունների առաջացման և տարածման վտանգ է ներկայացնում: Խոշոր եղջերավոր կենդանիների մետրիքից և ենթամթերքից ստացված արտադրանքների շուկան դարձել է ոչ կայուն: Անհրաժեշտություն է առաջացել վերականգնելու այդ շուկայի կայունությունը, և դրա իրականացումը հնարավոր է միայն արդյունավետ կերպով արտադրության պայմանների թափանցիկության և</p>

հրապարակայնության, ինչպես նաև տվյալ արտադրանքի վաճառահանման բարելավման միջոցով:

3. Տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականությունը

Նախագիծը չի ներառում բնագավառում իրականացվող գործող քաղաքականության փոփոխություն:

4. Կարգավորման նպատակը և բնույթը

Հայաստանի Հանրապետությունում խոշոր եղջերավոր կենդանիների համարակալման, գրանցման և անձնագրավորման գործընթացի նպատակն է Հայաստանի Հանրապետությունում առկա անասնազվաքանակի, դրանց սեռի, ցեղի և գտնվելու վայրի, տեղաշարժի մասին հավաստի տեղեկությունների ստացումն ու անասնաբուժական արտադրանքի ծավալների կանխատեսումը, վաճառվող մսի և մսամթերքի նկատմամբ սպառողների վստահության բարձրացումը, պետական պատվերի շրջանակներում հսկահամաճարակային միջոցառումների լիարժեք իրականացումը և հիվանդությունների կանխարգելումը, անասնաբուժական վերահսկմանը նպաստելը, անասնաբուժական մթերքի որակի փորձաքննությունը և երկրի ներսում կենդանիների տեղաշարժի վերահսկումը, ինչպես նաև, ապահովելով միջազգային ստանդարտներով սահմանված պահանջները, միջազգային շուկա մուտք գործելը:

Հայաստանի Հանրապետությունում խոշոր եղջերավոր կենդանիների համարակալման, հաշվառման և գրանցման ծրագիրն ապահովող միջոցառումների իրականացման ժամանակացույցով սահմանված՝ Հայաստանի Հանրապետության մարզերում խոշոր եղջերավոր կենդանիների համարակալման առկա, կանխատեսվող գլխաքանակի և պահանջվող ականջապիտակների հաշվառման, համայնքն սպասարկող անասնաբույժների, ՀՀ գյուղատնտեսության նախարարության մանրամթերքի անվտանգության պետական ծառայության աշխատակազմի անասնաբուժության տեսչության և մարզային կենտրոնների տեսուչների ուսուցման ու սերվերի ձեռքբերման, տեղադրման և փորձարկման միջոցառումները, որոնց կատարումը պայմանավորված չէ ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորմամբ, նախատեսվում է իրականացնել 2014 թվականի ընթացքում, իսկ մնացած միջոցառումները նախատեսվում է իրականացնել 2015 թվականին:

5. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք

ՀՀ կառավարության որոշման նախագիծը մշակվել է ՀՀ գյու-

	<p>ղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտագության պետական ծառայության կողմից, և նախագծի մշակման գործընթացում այլ ինստիտուտներ ու անձինք չեն ներգրավվել:</p> <p>6. Ակնկալվող արդյունքը</p> <p>Կենդանիների հաշվառման և համարակարման իրականացումը հնարավորություն կտա առավել արդյունավետ, կանխատեսելի և վերահսկելի դարձնելու Հայաստանի Հանրապետությունում կենդանիների տեղաշարժի, հիվանդությունների հսկողության, հակաանասնահամաճարակային միջոցառումների իրականացման, կենդանիների նախասպանդային և հետսպանդային զննման, կենդանիների ու կենդանական ծագում ունեցող մթերքի տեղափոխման փաստաթղթավորման աշխատանքները:</p>
<p>Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն</p>	
<p>49.</p>	<p>Հայկական ժառանգության էլեկտրոնային շտեմարանների ստեղծում</p> <p>1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)</p> <p>Գրատպության ստեղծումից հետո Վենետիկում Հակոբ Մեղապարտը տպագրեց առաջին հայատառ 5 գրքերը՝ «Ուրբաթագիրքը», «Պարզատումարը», «Պատարագատետրը», «Աղթարքը» և «Տաղարանը»: Դրան հաջորդեցին աշխարհի տարբեր երկրներում հայկական տպարանների հիմնումը և գրքերի, թերթերի ու ամսագրերի տպագրումը: Այդ տպագիր նյութերի պատմական, մշակութային և գիտական կարևորությունից ելնելով, ինչպես նաև հայագետների աշխատանքը հեշտացնելու, կարևոր հայագիտական հրատարակությունների վերաբերյալ նրանց տեղեկացված պահելու համար տարբեր երկրներում հայ մատենագետների ջանքերով տպագրվել են հայ պարբերական մամուլի, հայ գրքի մատենագիտական ցանկեր, որոնք ցայսօր միավորված և մեկ միասնական ձևաչափով համակարգված չեն: Ներկայումս հրամայական պահանջ են Հայաստանի ազգային գրադարանի հենքի վրա «Հայ պարբերական մամուլ» համահավաք գրացուցակի ստեղծումը և «Հայ գիրք» համահավաք շտեմարանի ձևավորումը: Դա կնպաստի Հայաստանի և աշխարհի տարբեր գրադարաններում պահվող գրքերի, մամուլի մատենագիտական տվյալների և մատենագետների կողմից կազմված ցուցակների մեկտեղմանը, մատենագիտական միավորների թվայնացմանը և դրանցից օգտվելու մատչելիության ապահովմանը:</p>

	<p>2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը</p> <p>Հայագետների համար տեղեկատվության եզակի աղբյուր հանդիսացող, միջազգային չափանիշներին համապատասխան համահավաք գրացուցակի, մշտապես համալրվող, թարմացվող շտեմարանի առկայություն՝ պարբերական մամուլի համարների թվայնացմամբ, դրանց երկարաժամկետ պահպանության ապահովմամբ:</p>
50.	<p>«Ցեղասպանության 100-ամյա տարելիցին ընդառաջ» ծրագրի իրականացում</p> <p>1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)</p> <p>Իրականացվող միջոցառումներն ու գործընթացները նպատակատուղված կլինեն ցեղասպանության գոհերի հիշատակի ոգեկոչմանը, միջազգային հանրությանը հայ ժողովրդի ֆիզիկական, ինչպես նաև հոգևոր ու մշակութային ցեղասպանության վերաբերյալ լիարժեք իրազեկմանը, հոգևոր և ստեղծագործ ներուժի շարունակականության փաստմանը:</p> <p>2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը</p> <p>Ցեղասպանության 100-ամյա տարելիցին ընդառաջ իրականացվող համալիր ծրագրերը հնարավորություն կընձեռեն ի մի բերելու և միջազգային հանրությանն իրազեկելու հայ ժողովրդի նկատմամբ իրականացված ոճրի ընդհանրական պատկերը, հանրահռչակելու ցեղասպանության թեմայով հայ և օտար հեղինակների ստեղծած փաստագրական և գեղարվեստական հսկայական գրականությունը, կնպաստեն անցյալի հիշողություններն ու ցեղասպանության հետևանքով ոչնչացված մշակութային ժառանգությունը հաջորդ սերունդներին փոխանցելու գործընթացին, աշխարհասփյուռ հայության միասնականության ամրապնդմանը:</p>
51.	<p>Երգչախմբային արվեստի զարգացման նպատում, մշակութային ենթակառուցվածքների արդիականացման ապահովում</p> <p>1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)</p> <p>Կիթանվեն երգչախմբային նոր գործերի ստեղծումն ու կատարումը, կրնդլայնվեն բնակչության տարբեր շերտերի հետաքրքրությունն ու տեղեկացվածությունը, և կաշխուժանա մշակութային կյանքը, այդ թվում՝ նաև ՀՀ մարզերում:</p> <p>Թատերահամերգային կազմակերպությունների նյութատեխնի-</p>

	<p>կական բազայի լուսաձայնային սարքավորումների և բեմական մեխանիզմների վերազինումը հնարավորություն կտա մշակութային կազմակերպությունները համալրելու միջազգային չափանիշներին համապատասխանող սարքավորումներով, կապահովի նոր տեխնոլոգիաների կիրառումը թատերական ներկայացումների և համերգային ծրագրերի իրականացման ընթացքում, ինչի շնորհիվ կբարձրանան մշակութային ծառայությունների մատուցման որակը, կազմակերպության վարկանիշը և կավելանա հաճախելիությունը:</p> <p>2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը</p> <p>Երգչախմբային նոր ստեղծագործությունների ստեղծում, բնակչության տարբեր շերտերի համար արվեստին առնչվելու ներգրավվածության ընդլայնում, մշակութային կյանքի աշխուժացում:</p> <p>Թատերահամերգային կազմակերպությունների բնականոն գործունեության ապահովում և ստեղծագործական աշխատանքների արդյունավետության, մշակութային ծառայությունների մատուցման որակի բարելավում:</p> <p>Միմֆոնիկ նվագախմբերի ստեղծագործական աշխատանքների արդյունավետության և կատարողական մակարդակի բարձրացման ապահովում:</p>
52.	<p>Գեղարվեստական կրթության զարգացում և մանուկների ու պատանիների գեղագիտական դաստիարակության ապահովում</p> <p>1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)</p> <p>1) ՀՀ-ում և ԼՂՀ-ում շնորհալի պատանի երաժիշտ-կատարողների զարգացման և կատարելագործման նպատակային ծրագրերի իրականացմամբ՝ տաղանդավոր երեխաների կայացման գործընթացին աջակցում.</p> <p>2) «Մշակութային կազմակերպություն-դպրոց» ուղիղ կապի համակարգի ներդրմամբ՝ ազգային ու համաշխարհային մշակույթի լավագույն դրսևորումների հիմքի վրա գործուն կրթամշակութային համակարգի ստեղծում և ապագա զարգացած ու տեղեկացված քաղաքացիական հասարակության ձևավորում.</p> <p>3) մանուկների և պատանիների մշակութային դաստիարակությանը, ստեղծագործական ունակությունների դրսևորմանն ուղղված նպատակային ծրագրերի իրականացմամբ գեղագիտական դաստիարակության ապահովում:</p> <p>2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը</p> <p>Բարեկիրթ, տեղեկացված հասարակության ձևավորում, տաղանդավոր երեխաների հայտնաբերում և աջակցում, միջազ-</p>

	գային հարթակներում հայ պատանի և երիտասարդ ուժերի ներկայության ապահովմամբ հայ արվեստի հանրահռչակում:
Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	
53.	<p>1. Անձի բազմակողմանի գնահատման՝ ֆունկցիաների միջազգային դասակարգման (ICF) սկզբունքների վրա հիմնված հաշմանդամության սահմանման մոդելի ներդրման հենքի ստեղծում</p> <p>1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)</p> <p>ՀՀ կառավարության 2014 թ. հունվարի 9-ի արձանագրային որոշմամբ հավանության են արժանացել Անձի բազմակողմանի գնահատման՝ Առողջապահության համաշխարհային կազմակերպության ֆունկցիաների միջազգային դասակարգման սկզբունքների վրա հիմնված հաշմանդամության սահմանման մոդելի ներդրման հայեցակարգը և հայեցակարգի կատարումն ապահովող միջոցառումների ժամանակացույցը: Համաձայն հայեցակարգի՝ նախատեսվում է մշակել նոր՝ անձի կարողությունների և կարիքների բազմակողմանի ֆունկցիաների միջազգային դասակարգման (ICF) սկզբունքների վրա հիմնված գնահատման համակարգ:</p> <p>Առաջին քայլերից մեկը Ֆունկցիաների միջազգային դասակարգման (ICF) պետական ստանդարտի ընդունումն է, որը հիմք կհանդիսանա տարբեր բնագավառներում հաշմանդամության հիմնախնդիրների կարգավորման համընդհանուր ու բազմակի կիրառման իրավական դրույթներ սահմանելու և միասնական գործունեություն ծավալելու համար:</p> <p>Հաշմանդամություն ունեցող անձանց համար հավասար և մատչելի պայմաններ ապահովելու համար, ինչը հաշմանդամության բնագավառում ՀՀ կառավարության որդեգրած նոր քաղաքականությունն է, կարևոր նախապայման է հաշմանդամության սահմանման գործընթացում սոցիալական մոդելի ներդրումը: Հաշմանդամության սահմանման հիմքում չպետք է դնել միայն հիվանդությունը (հաշմանդամության բժշկական մոդել), ինչը չի ապահովում անձի կարիքների բազմակողմանի գնահատումը: Ակներև է, որ նույն ախտորոշմամբ տարբեր անձինք կարող են տարբեր մասնակցություն ունենալ հասարակական կյանքում պայմանավորված անհատական և միջավայրային գործոններով: Կախված անձի և միջավայրի փոխհարաբերություններից՝ հաշմանդամության հանգամանքը կարող է տարբեր կերպ ազդել մարդու գործունեության վրա: Հետևաբար, անձի բազմակող-</p>

	<p>մանի գնահատման արդյունքում, նրա անհատական կարողություններին և կարիքներին համարժեք, անհրաժեշտ է տրամադրել համապատասխան սոցիալական ծառայություններ՝ նրա մասնակցությունը և սոցիալական ներառումն ապահովելու համար:</p> <p>2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը</p> <p>1) Ֆունկցիաների միջազգային դասակարգման (ICF) պետական ստանդարտի ընդունում.</p> <p>2) հաշմանդամության սահմանման նոր չափորոշիչների առկայություն:</p>
54.	<p>2. Զբաղվածության քաղաքականության նոր մոդելի ներդրման ապահովում</p> <p>1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)</p> <p>ՀՀ կառավարության հավանությանն է արժանացել Հայաստանի Հանրապետության զբաղվածության 2013-2018 թվականների ուղղվածության և «Զբաղվածության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հայեցակարգը: ՀՀ Ազգային ժողովի կողմից 2013 թ. դեկտեմբերի 11-ին ընդունվել է «Զբաղվածության մասին» ՀՀ օրենքը, որն ուժի մեջ է մտել 2014 թ. հունվարի 1-ից: Այս պարագայում օբյեկտիվ անհրաժեշտություն է դառնում զբաղվածության քաղաքականության նոր մոդելի գործնական կիրառության ապահովումը, այդ թվում</p> <p>1) զբաղվածության քաղաքականության մշակման և իրականացման նոր մոտեցումներն ու գործընթացներն ապահովող տեղեկատվական ամբողջական բազայի ձևավորումը և շահագործման համար անհրաժեշտ օրենսդրական մեխանիզմների ստեղծումը.</p> <p>2) տարեկան ծրագրի պլանավորման, իրականացման և գնահատման գործընթացների նպատակային կառավարման համար բավարար օրենսդրական մեխանիզմների ստեղծումը.</p> <p>3) զբաղվածության պետական ծառայությունում առկա թափուր աշխատատեղերի և աշխատանքային ռեսուրսների վերաբերյալ ամբողջական տեղեկատվության՝ էլեկտրոնային եղանակով շահառուներին հասանելիության ապահովման գործընթացների կազմակերպումը:</p> <p>2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը</p> <p>Զբաղվածության քաղաքականության նոր մոդելի գործառնական, ինստիտուցիոնալ և կիրառական հիմքերի ամբողջ-</p>

ջական ներդրում, մասնավորապես, զբաղվածության քաղաքականության իրականացման համակարգում կառուցվածքագործառնության փոփոխությունների կատարում այն համապատասխանեցնելով ինտեգրված սոցիալական ծառայությունների գաղափարախոսությանը:

Ջբաղվածության ոլորտում բարեփոխումների նպատակի իրականացումը պետք է հանգեցնի հետևյալ հիմնական արդյունքների ձեռքբերմանը՝

1) ըստ տնտեսության առանձին ոլորտների, ճյուղերի և պահանջվող մասնագիտությունների աշխատուժի ներգրավման, ինչպես նաև ինքնազբաղվածության խրախուսման պայմանների ու հնարավորությունների բարելավում:

2) տնտեսություն – աշխատաշուկա – կրթական համակարգ մշտական և համակարգված փոխկապվածության հիմքերի ստեղծում և զարգացում:

3) մասնագիտական կողմնորոշման գործուն համակարգի ներդրում:

4) աշխատաշուկայի տարածքային զարգացման անհամամասնությունների մեղմում:

5) ժողովրդագրական և աշխատանքային միգրացիայի դրական միտումների պահպանում և հետևողական բարելավում:

6) արժանապատիվ աշխատանքի պայմանների խթանում, արդյունավետ իրավական հիմքերի ապահովում:

7) բնակչության կենսամակարդակի բարձրացում զբաղվածության արդյունքում ստացվող եկամուտների ավելացման և արդարացի բաշխման մեխանիզմների ներդրման միջոցով:

8) տնային տնտեսությունների հետազոտության արդյունքների հիման վրա հաշվարկված գործազրկության մակարդակի թիրախավորված կրճատում:

9) աշխատաշուկայում ինտեգրման լրացուցիչ դժվարություններ ունեցող անձանց՝ ըստ առաջնահերթությունների խմբավորում և պետական աջակցության տրամադրում:

10) աշխատաշուկայի պետական կարգավորմանն ուղղվող ֆինանսական միջոցների օգտագործման հասցեականության և արդյունավետության բարձրացում:

11) աշխատանքի տեղավորման ծառայություններ մատուցող ոչ պետական կազմակերպությունների գործունեության կարգավորում պետության հետ փոխշահավետ համագործակցության խթանման միջոցով:

12) զբաղվածության պետական ծառայությունների և ծրագրերի

	<p>որակի, հասցեականության, մատչելիության և հնարավորությունների նպատակային կառավարման, ինչպես նաև գնահատման ու մոնիթորինգի համակարգերի ներդրում.</p> <p>13) զբաղվածության պետական ծրագրերի և ծառայությունների արդյունքում կայուն զբաղվածության ցուցանիշների հետևողական աճ.</p> <p>14) զբաղվածության քաղաքականության մշակման և իրականացման գործընթացների բոլոր մակարդակներում սոցիալական գործընկերության հետևողական ամրապնդում:</p>
55.	<p>Ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման իրավական դաշտի ամբողջականացում և համալիր սոցիալական ծառայություններ տրամադրող ևս 10 տարածքային կենտրոնների լիարժեք գործում</p> <p>1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)</p> <p>Համաձայն ՀՀ կառավարության 2014 թ. մայիսի 19-ի N 511-Ա որոշմամբ հաստատված և ՀՀ Ազգային ժողովի կողմից հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի՝ ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման համակարգի ստեղծումը ՀՀ կառավարության սոցիալական քաղաքականության հիմնական ուղղություններից է:</p> <p>ՀՀ կառավարության 2012 թ. հուլիսի 26-ի N 952-Ն որոշմամբ հաստատվել է ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրման ծրագիրը, ինչպես նաև՝ իրականացվող փորձնական ծրագիրը: Նույն որոշման 3-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված է նաև ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ամբողջական ներդրումն ապահովող իրավական ակտերի նախագծերի մշակման պահանջը:</p> <p>2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը</p> <p>1) «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՀՀ վարչապետի որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը՝ «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո մեկամսյա ժամկետում:</p> <p>2013 թ. դեկտեմբերի 12-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքը, որն ուժի մեջ է մտել 2014 թ. հունվարի 1-ից: Նոր ընդունված «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովելու նպատակով հարկ է, որ ՀՀ կառավարության կողմից</p>

ընդունվեն մի շարք որոշումներ, որոնցով կապահովվի նոր օրենքով սահմանված՝ ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման սկզբունքներին համապատասխանող դրույթների կիրառումը: Միաժամանակ, ուժը կորցրած կճանաչվեն ներկայումս գործող «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովող ՀՀ կառավարության մի շարք որոշումներ: ՀՀ վարչապետի որոշման ընդունմամբ կսահմանվի ընդունված օրենքի կիրառումն ապահովող միջոցառումների ժամանակացույցը.

2) «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՀՀ վարչապետի որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը՝ «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո մեկամսյա ժամկետում.

ՀՀ կառավարության կողմից հավանության է արժանացել «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի նախագիծը և 2013 թ. նոյեմբերի 27-ին ներկայացվել է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով: Այն ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվելուց հետո ուժը կորցրած կճանաչվեն ներկայումս գործող «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովող ՀՀ կառավարության մի շարք որոշումներ: Նոր ընդունված «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովելու նպատակով հարկ է, որ ՀՀ կառավարության կողմից ընդունվեն մի շարք որոշումներ, որոնցով կապահովվի նոր օրենքով սահմանված՝ ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման սկզբունքներին համապատասխանող դրույթների կիրառումը: ՀՀ վարչապետի որոշման ընդունմամբ կսահմանվի ընդունված օրենքի կիրառումն ապահովող միջոցառումների ժամանակացույցը.

3) համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնների տեղակայման համար անհրաժեշտ շենքը (շինությունները) ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանն ամրացնելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը կամ համապատասխան համայնքի ղեկավարի հետ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի՝ դրանք անհատույց և անժամկետ օգտագործման մասին պայմանագրերի կնքում (երկուսը միասին՝ ընդամենը 10): Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրման ծրագրում «մեկ

պատուհանի» սկզբունքի կիրառումն ապահովելու նպատակով սոցիալական ծառայություններ տրամադրող հիմնական կառույցները (սոցիալական ծառայությունների տարածքային մարմիններ, զբաղվածության տարածքային կենտրոններ, սոցիալական ապահովության պետական ծառայության տարածքային կենտրոններ) տեղակայվում են մեկ միասնական շենքում, որտեղ ձևավորվում է միասնական ընդունարան: Ձևավորվող համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնների (այսուհետ՝ ՀՄԾՏԿ) բնականոն և երկարատև գործարկում ապահովելու նպատակով հարկ է, որ այդ շենքերը (շինությունները) գտնվեն մեկ միասնական մարմնի տնօրինման (հսկողության) ներքո, ապահովեն պահպանման և շահագործման բավարար պայմաններ: Այս իսկ պատճառով նախատեսվում է, որ ՀՄԾՏԿ-ների տեղակայման համար տրամադրվող՝ պետական գույք հանդիսացող շենքերը ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով ամրացվեն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը, իսկ համայնքային սեփականություն հանդիսացող շենքերը պայմանագրային հիմունքներով անհատույց և անժամկետ օգտագործման հանձնվեն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը.

4) համալիր սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային կենտրոնների տեխնիկական վերազինում:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տնօրինմանը կամ օգտագործմանը հանձնված գույքը (շենք, շինություն) նախատեսվում է Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող սոցիալական պաշտպանության վարչարարության բարեփոխումների ծրագրի շրջանակներում շարունակել վերանորոգել, տեխնիկապես զինել՝ ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման համար բավարար պայմաններ ստեղծելու նպատակով միասնական ընդունարան և այլն.

5) համալիր սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային գործարկվող կենտրոնների աշխատողների վերապատրաստման դասընթացների կազմակերպում: Նախատեսվում է շարունակել փորձնական ծրագրում ներառվող նոր ՀՄԾՏԿ-ների աշխատողների վերապատրաստումը՝ ՀՄԾՏԿ-ների աշխատանքի բնականոն գործունեությունը նոր սկզբունքով ապահովելու նպատակով:

Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարություն

56.

Արդյունաբերության զարգացման աջակցության և խթանման ապահովում

1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)

Որպես տնտեսության և առանձին ճյուղերի շարժիչ ուժ՝ արտադրության բնագավառում վերջին տարիներին դիտարկվող առաջընթացի միտումների ամրապնդման ու կայունացման հրամայական կա: Այս իմաստով արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ նախատեսվող ծրագրերի առանցքը պետք է կազմի արտադրողականության մակարդակի բարձրացման, արդյունաբերության տեխնոլոգիական արդիականացման, արտաքին շուկաներում տեղական արտադրանքի մրցունակության բարձրացման աշխատանքների արդյունավետության բարձրացումը: Նշված նպատակով ՀՀ կառավարությունը շեշտադրում է երկու հիմնական ուղղություն: Նախ, կարևորվում է պետության դերը՝ ոչ միայն որպես բարենպաստ միջավայրի երաշխավորի ու ընդհանուր քաղաքականության պատասխանատուի, այլև՝ որպես ակտիվ աջակցողի և գործընկերոջ: Այնուհետև, վարվող ակտիվ արդյունաբերական քաղաքականության աջակցության առկա գործիքակազմի ընդլայնման ու կատարելագործման, նոր գործիքների ներմուծման ու կիրառման միջոցով կվերանայվի հայրենական արտադրողին պետական աջակցության հատվածային մոտեցումը:

Արդյունաբերական զարգացման և տնտեսության արդիականացման առաջնային շարժիչներից են դիտվում տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացումն ու դրա արդյունքների համատարած կիրառումը տնտեսության բոլոր ճյուղերում: ՏՀՏ հասանելիությունը և մատչելիությունը բարձրացնելու, մրցունակ ՏՏ ընկերություններ ու կարողություններ զարգացնելու պետական ծրագրերը պետք է ապահովեն այդ սպասելիքը:

Զբոսաշրջությունը, որպես դինամիկ զարգացող, ուղղակի տնտեսական եկամուտներ և անուղղակի օգուտներ բերող ոլորտ, պետք է կազմի արդյունաբերական համալիրի անքակտելի մասը: Երկրի մրցակցային առավելությունների պատշաճ շեշտադրման և առկա ներուժի համալիր իրացման շեշտադրումներով կձևավորվի զբոսաշրջային արդյունքի առաջարկը:

2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը

Նախատեսվում է համալիր գործողություններ իրականացնել՝ Հայաստանում համապատասխան ոլորտների աճը և զարգա-

	<p>ցումն ապահովելու համար, մասնավորապես՝</p> <ol style="list-style-type: none"> 1) արտահանման վրա հիմնված արդյունաբերական քաղաքականության ռազմավարության շրջանակներում ամրագրված ծրագրերի իրականացման ապահովման. 2) «Զբոսաշրջությանն աջակցության ծառայություններ» 2014 թվականի ծրագրի իրականացման. 3) «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացման պետական աջակցության» 2014 թվականի ծրագրի իրականացման միջոցով: <p>Գերակա խնդրի լուծման արդյունքում ոլորտային ռազմավարությունների հետևողական իրագործման միջոցով ակնկալվում է տնտեսությունում արդյունաբերության, տեղեկատվական տեխնոլոգիաների, զբոսաշրջության ոլորտների ընդլայնում:</p>
57.	<p style="text-align: center;">Արտահանման խթանում և զարգացման նպաստավոր պայմանների ապահովում</p> <p>1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)</p> <p>Համաշխարհային տնտեսական կոնյունկտուրայում վերջին տասնամյակների վերափոխումները փաստում են, որ երկրների երկարաժամկետ և կայուն տնտեսական զարգացման երաշխավորման գործում բացարձակ կարևորություն ունի արդյունավետ շուկաներում մասնակցության խորացումը և առևտրատնտեսական գործակցության արդյունավետ մեխանիզմների որդեգրումը: Այս իմաստով Հայաստանի տնտեսական քաղաքականության ներկա վեկտորը միտված է արտահանման զարգացման հնարավորությունների հետևողական ընդլայնմանը, ներմուծման նկատմամբ արտահանման աճի առաջանցիկ տեմպերի ապահովմանը, արտահանման ոչ միայն քանակական, այլ նաև՝ որակական բարելավմանը:</p> <p>Նշված առաջնահերթ նպատակադրումների համատեքստում կարևորվում են առևտրատնտեսական գործընկերների հետ փոխհարաբերությունների զարգացումը, արտաքին առևտրային պատշաճ մեխանիզմների որդեգրումը և տարածաշրջանային ինտեգրացիոն գործընթացներին արդյունավետ մասնակցությունը:</p> <p>Տնտեսության արտահանման ուղղվածության խորացումը, որպես ներքին շուկայի սահմանափակումների հաղթահարման</p>

	<p>և մրցունակության բարելավման կարևոր միջոց, պարտադրում է նաև պատշաճ որակի ու մակարդակի աջակցող ինստիտուտների կայացումը գործող կառույցների կարողությունների հզորացման և արդյունավետության բարձրացման խնդիրների հասցեագրում: Այն պետք է երաշխավորի արտաքին առևտրատնտեսական հարաբերություններում և միջազգային շուկայում տեղական գործարարների պատշաճ ներկայացվածության ապահովումը:</p> <p>Գերական խնդրի շրջանակներում կարևոր է նաև տնտեսավարողներին արտաքին շուկաների և հիմնական գործընկերների վերաբերյալ իրազեկման և խորհրդատվության աշխատանքների ապահովումը, մասնավորապես, Եվրասիական տնտեսական միության՝ արտաքին առևտրատնտեսական հարաբերություններին առնչվող իրավական կարգավորումների ու պայմանների վերաբերյալ:</p> <p>2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը</p> <p>Գերակա խնդրի լուծման նպատակով շեշտադրվում են վարվող տնտեսական քաղաքականության իրողությունների համատեքստում արտահանման թիրախային շուկաներում մուտքի հնարավորությունների ընդլայնումը, ինչպես նաև այնպիսի նախաձեռնությունների խթանումն ու առաջնությունը, որոնք անմիջականորեն ուղղված են արտաքին առևտրի զարգացմանն ու համապատասխան ենթակառուցվածքների զարգացմանը:</p> <p>Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվում է ապահովել արտահանման համար առավել նպաստավոր պայմաններ, որոնք կերաշխավորեն ներմուծման նկատմամբ առաջանցիկ աճող արտահանման տեմպեր, միջազգային գների տատանումներից նվազ խոցելի և դիվերսիֆիկացված արտահանման պորտֆել, արտաքին առևտուրն սպասարկող ենթակառուցվածքների պատշաճ մակարդակ:</p>
58.	<p>Գործարար և ներդրումային միջավայրի բարելավմանն ուղղված բարեփոխումների շարունակում և ՓՄՁ-ի զարգացմանն աջակցություն</p> <p>1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)</p> <p>Միջազգային առևտրատնտեսական հարաբերություններում առավել մրցունակ և նվազ խոցելի մասնակից լինելու կարևոր նախապայման է դինամիկ ներդրումային հոսքերի առկայությունը, հատկապես նրանք, որոնք կրում են առաջադեմ տեխնոլոգիաների և գիտելիքի փոխանցման էֆեկտը: Մինևույն</p>

	<p>ժամանակ՝ հայտնի է, որ տնտեսությունը մրցունակ է այնքանով, որքանով դրա ճյուղերը մշտապես արդիականալու և խոշոր ներդրումներ յուրացնելու հատկություն ունեն: Սա պահանջում է հետևողական քայլեր՝ ինչպես երկրում ընդհանուր գործարար միջավայրի կատարելագործման, այնպես էլ՝ իրական տնտեսության առաջնահերթ ոլորտներում ներդրումային ռեսուրսներ կլանելու հնարավորությունների մեծացման ուղղությամբ: Ընդ որում, խնդրի կարևորությունը դիտարկվում է ոչ միայն արտաքին ներդրումային հնարավորությունների նույնականացման և արդյունավետ իրացման, այլև՝ ներքին տնտեսությունում առկա ռեսուրսային հնարավորությունների ընդլայնման ու գործարարության զարգացման համար դրանց հասանելիության աստիճանի բարձրացման տեսակետից:</p> <p>Նշված համատեքստում, որպես տնտեսության առավել ճկուն և նորարարություններ յուրացնելու տեսակետից առավել ընկալունակ հատված, փոքր և միջին ձեռնարկությունների զարգացմանն ուղղված նպատակային քաղաքականությունը համալրում է գերակա խնդրի լուծմանն առնչվող քայլերի փաթեթը:</p> <p>Գործարարության և ներդրողների համար գրավիչ միջավայր ձևավորելու շրջանակը ներառում է նաև մեկնարկած տեսչական բարեփոխումների շարունակությունը և երկրում ստուգումների համակարգի բարելավումը:</p> <p>2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը</p> <p>Գերակա խնդրի իրականացման նպատակով, մի կողմից, հետևողականորեն կշարունակվեն իրականացվել արդեն իսկ մեկնարկած բարեփոխումները գործարար միջավայրի բարելավման ուղղությամբ, մյուս կողմից՝ նոր իրողություններին ու հրամայականներին համահունչ ձևավորված ներդրումային քաղաքականության իրականացման, իրական տնտեսության համար ներդրումային ռեսուրսների ներգրավման առկա հնարավորությունների ընդլայնման և հասանելիության բարձրացման, ինչպես նաև ՓՄՁ աջակցության ընդլայնման աշխատանքներ:</p> <p>Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվում է ներդրումների ներգրավման տեսանկյունից ունենալ առավել գրավիչ միջավայր, տնտեսության առավել դինամիկ և նորարարական իրական հատվածի ձևավորման համար հնարավորությունների իրացման բարենպաստ պայմաններ:</p>
59.	Քաղաքացիական ավիացիայի ազատականացման

բարեփոխումների ապահովում

1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)

2013 թվականի հոկտեմբերի 23-ին ՀՀ կառավարության N 1248-Ա որոշմամբ հաստատվեցին Հայաստանի Հանրապետությունում մրցունակ և կայուն ավիափոխադրումների ծառայությունների մատուցման ծրագիրը և ծրագրի իրականացման միջոցառումները (ծրագիր), որով Հայաստանում քաղաքացիական ավիացիայի բնագավառում հռչակվեց բաց երկնքի քաղաքականությունը: ՀՀ վարչապետի որոշմամբ ստեղծված աշխատանքային խումբը պատասխանատու է ծրագրով ամրագրված միջոցառումների իրականացումն ապահովելու համար:

Ծրագրի համաձայն բարեփոխումների իրագործման փաթեթն ամրագրում է մի շարք առանցքային ուղղություններով միջոցառումներ, այդ թվում ոլորտը կանոնակարգող նոր ինստիտուցիոնալ կառուցվածքի ձևավորումը՝ քաղաքականության մշակման, դժբախտ պատահարների հետաքննության և տեխնիկական կանոնակարգման ու անվտանգության նկատմամբ հսկողության գործառույթների տարանջատմամբ: 2013 թվականի տարեկերթից արդեն մեկնարկել են ոլորտը կարգավորող նոր ինստիտուցիոնալ կառուցվածքի ձևավորման աշխատանքները, և ներկա փուլում առանցքային է ինստիտուցիոնալ նոր կարգավորման ամրագրումը, որը պետք է հենք ծառայի ոլորտի հետագա զարգացման և բարեփոխումների ծրագրով ամրագրված արդյունքների ձեռքբերման համար:

Բարեփոխումների մյուս կարևոր ուղղությունն օդային հաղորդակցության մասին պայմանագրերի վերանայման և քաղաքացիական ավիացիայի բնագավառում համագործակցության նոր շրջանակի շուրջ օտարերկրյա պետությունների հետ վարվող բանակցությունների և խորհրդակցությունների շարունակումն է:

2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը

Ծրագրի իրականացմամբ դրական արդյունքներ են ակնկալվում շահառուների գերակշիռ մասի համար: Մասնավորապես, զբոսաշրջության ոլորտում սպասվում է ներգնա զբոսաշրջիկների թվի աճ և աշխարհագրության ընդլայնում, ավիացիոն ոլորտում գործարար միջավայրի կանխատեսելիության բարձրացում, գործարար շրջանակների տեսանկյունից՝ գործարար հաղորդակցության համար առավել հարմարավետ (ժամկետներ, ծախսեր) պայմաններ և ընդլայնված հնարավորություններ:

60.

Ինովացիոն գործունեության աջակցություն և խթանում

	<p>1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)</p> <p>Արդյունաբերության զարգացման և տնտեսության արդիականացման անհրաժեշտ հենասյուն է դիտվում ինովացիոն զարգացումը՝ նպատակ ունենալով իրապես կայացնելու կրթություն - գիտություն - տնտեսություն կապը: Գիտության արդյունքները մինչև տնտեսության մեջ ներդնելու յուրաքանչյուր փուլին անցումը շուկայական լուրջ շարժառիթներ ստեղծելու անհրաժեշտություն ունի:</p> <p>Կարևորվում են պետության աջակցությունը և հասցեական քաղաքականությունը, որի շրջանակներում մի քանի խոշոր համակարգաստեղծ ծրագրեր շոգեքարշի էֆեկտ կունենան: Համաֆինանսավորման դրամաշնորհային գործիքների, տնտեսության կողմից ինովացիոն պահանջարկի խթանների, նոր տեխնոլոգիաների յուրացմանն ուղղված ներդրումների համար տարբերակված ռեժիմների, մտավոր սեփականության օբյեկտների իրավական պահպանության ժամանակակից միջազգային չափանիշները բավարարող համակարգի ձևավորումն ինովացիոն զարգացման խթանման շղթայի կարևորագույն օղակն է:</p> <p>Իրականացվող միջոցառումներն ուղղված կլինեն Հայաստանում ինովացիոն տնտեսության ձևավորման մեկնարկային ռազմավարության հայեցակարգով նախատեսված համակարգաստեղծ նախաձեռնությունների իրականացմանն աջակցությանը և ինովացիոն ոլորտում միջազգային համագործակցության ակտիվացմանը:</p> <p>2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը</p> <p>Երկրի ինովացիոն համակարգի բաղադրիչների կայացմանը և նոր նախաձեռնությունների առաջնդմանը նպաստող քաղաքականության գործողությունների իրականացման արդյունքում ակնկալվում է տնտեսության տարբեր ոլորտներում ինովացիոն արդյունքների կիրառման ընդլայնում, գիտությունից իրական տնտեսություն արժեշղթայի կայացում, գիտական արդյունքի միջազգային ճանաչելիության բարձրացում:</p>
<p>Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն</p>	
<p>61.</p>	<p>Ժամանակակից քրեակատարողական հիմնարկների կառուցման շարունակում՝ ազատագրված անձանց պահման պայմանները միջազգային չափանիշերին համապատասխանեցնելու և ազատագրված վայրերում մարդու իրավունքների պաշտպանության բարձր մակարդակ ապահովելու նպատակով</p>

Օրենսդրության վերլուծություն

1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)

1995 թվականից մինչև 2000 թվականը Հայաստանի Հանրապետությունում ընդունված իրավական ակտերի՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիային, Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, օրենքներին և այլ իրավական ակտերին համապատասխանության ապահովման համար անհրաժեշտ քայլերն են՝

1995 թվականից մինչև 2000 թվականը Հայաստանի Հանրապետությունում ընդունված իրավական ակտերի՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիային, Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, օրենքներին և այլ իրավական ակտերին համապատասխանության ուսումնասիրություն, դրանց համեմատական վերլուծություն ու Հայաստանի Հանրապետությունում գործող օրենսդրական համակարգը մաքրելու և կատարելագործելու վերաբերյալ տվյալ իրավական ակտերն ընդունող մարմիններ առաջարկություններ ներկայացնելը.

ակնկալվող արդյունքները. Հայաստանի Հանրապետության օրենսդրության վերլուծություն և կատարելագործում, Հայաստանի Հանրապետությունում գործող օրենսդրական դաշտում առկա «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիային, Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, օրենքներին և այլ իրավական ակտերին հակասող իրավական ակտերի վերացում.

քրեակատարողական համակարգի ենթակառուցվածքային և կիրառական խնդիրների լուծումը, շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգումը, ինչպես նաև դատապարտյալների ու կալանավորված անձանց պահելու վայրերում պայմանների բարելավումն իրականացվող դատափրավական բարեփոխումների ուղղություններից մեկն է:

Քրեակատարողական ծառայության բարեփոխումների սկզբնական փուլում՝ 2001-2006 թվականներին, վերանորոգվել է քրեակատարողական չորս հիմնարկ՝ համակարգի առջև ծառայած խնդիրների ժամանակավոր լուծման համար: Իհարկե, պետք է փաստել, որ նույնիսկ վերանորոգված հիմնարկների դեպքում չենք կարող խոսել համակարգի

ենթակառուցվածքների՝ եվրոպական չափանիշներին լիովին համապատասխանելու մասին: Այլ կերպ ասած՝ մինչև այժմ կատարված բարեփոխումների արդյունքում վերանորոգված քրեակատարողական հիմնարկները կարող են համարվել միայն անցողիկ փուլ ապահովող: Այդ իսկ պատճառով քրեակատարողական նոր հիմնարկի կառուցումն անհրաժեշտություն է:

Ներկայումս Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության կազմում գործում է 13 քրեակատարողական հիմնարկ, որոնցում հնարավոր է պահել կալանավորված և ազատությունից զրկելու հետ կապված պատժի դատապարտված 4395 անձի: Այդ հիմնարկներում պահվող անձանց միջին թիվը կազմում է մոտավորապես 320: Նման փոքր հիմնարկների պահպանումը, մանավանդ, երբ դրանք գտնվում են միևնույն բնակավայրում կամ շատ մոտ են միմյանց, ծայրահեղ անարդյունավետ է:

Եվրոպական երկրների փորձն անառարկելիորեն վկայում է, որ այդ երկրներում առկա է քրեակատարողական հիմնարկների թվի կրճատման միտում, ինչն, անկասկած, արդարացված է նաև տնտեսական արդյունավետության և ֆինանսական միջոցները խնայելու տեսանկյունից: Այս տեսակետից քրեակատարողական ծառայության ենթակառուցվածքային բարեփոխումների առաջիկա խնդիրն է հնարավորինս էժանացնել կալանավորվածներին պահելու վայրերում անձանց պահելը և պատժի իրականացումը, որոնց հնարավորությունը պայմանավորված կլինի քրեակատարողական փոքր հիմնարկների թվի կրճատմամբ:

Խոշորացված քրեակատարողական հիմնարկների գաղափարն ընդունելի է նաև կազմակերպարավական չափանիշներով:

Հարկ է նկատել, որ կենտրոնացումը հնարավորություն է տալիս առավել արդյունավետ օգտագործելու մասնագիտական ռեսուրսները: Օրինակ, սոցիալ-հոգեբանական, բժշկական ոլորտի լավագույն մասնագետների համար, ովքեր գործնականում այնքան էլ շատ չեն, հնարավոր է գործունեության առավել լայն պայմաններ ստեղծել միայն խոշորացված քրեակատարողական հիմնարկներում:

Քրեակատարողական ծառայության գործունեության առանձնահատկություններից մեկն այն է, որ կալանավորվածների և դատապարտյալների կողմից իրենց իրավունքներն իրացնելուն խոչընդոտելու, իրավունքների բնականոն իրացման հետ կապված կոռուպցիայի դեպքերը

հաճախ տեղի են ունենում ավտոմատացված համակարգերի բացակայության պատճառով, որոնք հանգեցնում են նրանց իրավունքների իրացման բնականոն գործընթացի կախվածությանը քրեակատարողական ծառայողներից, որն էլ իր հերթին հանգեցնում է էական կոռուպցիոն ռիսկերի ստեղծմանը:

Այսպիսով, քրեակատարողական ծառայության՝ օրենքով նախատեսված խնդիրների կատարումը լիովին և պատշաճ մակարդակով ապահովելու նպատակով անհրաժեշտ և նպատակահարմար է 2013 թ. ընթացքում ստեղծել նոր ուղղիչ հիմնարկ և իրականացնել դատապարտյալների ու կալանքի տակ գտնվող անձանց պահելու վայրերում պայմանների բարելավման անհրաժեշտ միջոցառումներ:

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկների գերծանրաբեռնվածության հիմնական պատճառներից մեկը շենքերի և շինությունների ներկա պայմաններն են: Ժամանակի հրամայականն է դարձել քրեակատարողական ծառայությունում հստակ և արդյունավետ բարեփոխումների իրականացումը, այն է՝ ենթակառուցվածքային ոլորտի բարեփոխումները՝ կապիտալ ծախսերի գծով, ինչը փորձով ապացուցել է իր առավել արդյունավետությունը:

Քրեակատարողական համակարգում իրականացվել են մի շարք կապիտալ և վերակառուցման շինարարական աշխատանքներ. վերանորոգվել են Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության «Վարդաշեն», «Վանաձոր», «Արթիկ», «Հրազդան» քրեակատարողական հիմնարկները, «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում կառուցվել է կալանավորված անձանց պահելու համար նախատեսված մասնաշենք: Չնայած այդ ամենին՝ ֆինանսական միջոցների անբավարարության հետևանքով մնացած քրեակատարողական հիմնարկները չեն հիմնանորոգվել, և դրանց շենքային պայմաններն անմխիթար վիճակում են (միջազգային փորձագետների կողմից գնահատվում է անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք): Ներկայումս տվյալ ասպարեզում քրեակատարողական համակարգի գերակայությունն է՝ չվերանորոգված քրեակատարողական հիմնարկների վերանորոգումը կամ նոր հիմնարկների կառուցումը: Գրեթե բոլոր քրեակատարողական հիմնարկները հին կառույցներ են, համարվում են վթարային և բավարար վիճակում, իսկ այն քրեակատարողական հիմնարկները, որոնք վերակառուցվել են և շատ դեպքերում համապատասխանում են միջազգային չափորոշիչներին, այնուհանդերձ, նույնպես կարիք ունեն որոշակի

	<p>բարեփոխումների:</p> <p>Ներկայացված խնդիրներին հրատապ լուծում չտալը կհանգեցնի Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային մի շարք պարտավորությունների խախտման, այդ թվում՝ նաև ՀՀ-ԵՄ ԵՀՔ գործողությունների ծրագրի մի շարք կետերով նախատեսված միջոցառումների չկատարման, ինչպես նաև ՀՀ պետական բյուջեի վրա կշարունակի առկա մնալ ներկա պայմաններում ազատագրկման դատապարտված և ձերբակալված ու կալանավորված անձանց պահելու հետ կապված ծախսերը հոգալու բեռը, ինչը կարող է նվազել նշված գերակա խնդրի իրականացման արդյունքում:</p> <p>2. Ակնկալվող արդյունքը</p> <p>Նոր, միջազգային բոլոր չափանիշներին համապատասխանող քրեակատարողական հիմնարկը հնարավորության կտա ապահովելու դատապարտյալների, ինչպես նաև ձերբակալված և կալանավորված անձանց հիմնարար իրավունքները՝ պահպանելով պատժի անհատականացման սկզբունքը:</p> <p>Նոր ենթակառուցվածքային բարեփոխումները կսահմանեն հիմնարկի կառավարելիության անհրաժեշտ աստիճան՝ հնարավորություն տալով վարչակազմին ապահովելու անվտանգությունը:</p>
62.	<p>«Քաղաքացիական կացության ակտերի մասին» ՀՀ նոր օրենքի նախագիծ</p> <p>1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)</p> <p>«Քաղաքացիական կացության ակտերի մասին» ՀՀ նոր օրենքի նախագծի հիմնական նպատակը քաղաքացիական կացության ակտերի էլեկտրոնային գրանցումն իրավական հարթության վրա դնելն է: Նշված նախագծով կսահմանվի նաև միասնական ռեգիստրի ինստիտուտը: Բացի դրանից, օրենքի նախագիծը նպատակ ունի նշված ոլորտի իրավական ակտերում վերացնելու ՀՀ Սահմանադրության հետ առկա հակասությունները:</p> <p>2. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները</p> <p>Գործող «Քաղաքացիական կացության ակտերի մասին» ՀՀ օրենքը նշված ոլորտում էլեկտրոնային գրանցման համակարգի կիրառման համար հնարավորություն չի տալիս: Բացի դրանից, կան իրավահարաբերություններ, որոնք չեն կարգավորվում ՀՀ օրենքով, այնինչ դրանք ըստ ՀՀ Սահմանադրու-</p>

	<p>թյան կարող են կարգավորվել բացառապես օրենքով:</p> <p>3. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները</p> <p>Առաջարկվում է «Քաղաքացիական կացության ակտերի մասին» ՀՀ նոր օրենքի նախագծով հստակ դրույթներ սահմանել ՔԿԱԳ էլեկտրոնային համակարգի կիրառման համար: Մինևույն ժամանակ, ՀՀ արդարադատության նախարարի հրամանով կարգավորվող այն հարաբերությունները, որոնք պետք է կարգավորվեն ՀՀ օրենքով, պետք է սահմանվեն այս օրենքի նախագծով:</p> <p>4. Կարգավորման առարկան</p> <p>«Քաղաքացիական կացության ակտերի մասին» ՀՀ նոր օրենքի ընդունմամբ իրավական հիմքեր կստեղծվեն քաղաքացիական կացության ակտերի գրանցման էլեկտրոնային համակարգի ներդրման և միասնական ռեգիստրի ստեղծման համար: Մինևույն ժամանակ ՔԿԱԳ այն իրավահարաբերությունները, որոնք մինչև այժմ կարգավորվում են ենթաօրենսդրական ակտերով, մինչդեռ ՀՀ Սահմանադրության համաձայն պետք է կարգավորվեն ՀՀ օրենքով, կներառվեն «Քաղաքացիական կացության ակտերի մասին» ՀՀ նոր օրենքի նախագծում:</p> <p>5. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը</p> <p>«Քաղաքացիական կացության ակտերի մասին» ՀՀ նոր օրենքի ընդունմամբ հնարավոր կլինի գործարկել ՔԿԱԳ էլեկտրոնային համակարգը և միասնական ռեգիստրը: Միաժամանակ կվերանան նշված ոլորտում ՀՀ Սահմանադրության հետ առկա հակասությունները:</p>
<p>Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարություն</p>	
<p>63.</p>	<p>Հայաստանի Հանրապետության պաշտպանության ռազմավարական վերանայման գործընթացի 2014-2015 թվականների շրջափուլի իրականացում</p> <p>1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)</p> <p>Ռազմավարական վերանայման նոր շրջափուլի իրականացման անհրաժեշտությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ 2008-2010 թթ. ընթացքում իրականացված ՀՀ պաշտպանության ռազմավարական վերանայման առաջին շրջափուլի արդյունքում ընդունված որոշումներով և մշակված պլանավորման փաստաթղթերով միջոցառումներ են սահմանվել մինչև 2015 թ.</p>

ընկած ժամանակահատվածի համար: 2015 թվականին հաջորդող 5-6-ամյա ժամանակահատվածի համար առկա և կանխատեսվող սպառնալիքների գնահատման, ՀՀ շուրջ անվտանգության միջավայրում տեղի ունեցած փոփոխությունները հաշվի առնելու և դրանց հիման վրա համապատասխան որոշումներով աջակցվող ռազմավարական և զորային պլանավորումն ապահովելու նպատակով անհրաժեշտ է 2014 թվականից սկսել և մինչև 2015 թ. վերջն ավարտել ՀՀ պաշտպանության ռազմավարական վերանայման նոր շրջափուլը:

2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը

Ակնկալվում է ՀՀ պաշտպանության համակարգը՝ ներառյալ անձնակազմը, մարտավարական արվեստը և ռազմական տեխնիկան, համապատասխանեցնել անվտանգության փոփոխված միջավայրի պահանջներին՝ առկա և ակնկալվող անվտանգության ռիսկերին ու մարտահրավերներին արդյունավետորեն դիմակայելու նպատակով: Այդ համատեքստում կվերասահմանվեն ՀՀ զինված ուժերում բարեփոխման ենթակա ուղղություններն ու առաջնահերթությունները՝ դրանց հաղորդելով միջնաժամկետ, որոշ դեպքերում նաև երկարաժամկետ բնույթ, ինչը կդյուրացնի ու կպարզեցնի նաև պաշտպանության նպատակներով իրականացվող ծախսերի պլանավորումը: Արդյունքում կապահովվի ՀՀ զինված ուժերին հատկացվող նյութական միջոցների առավել նպատակային օգտագործումը, առկա խնդիրներին կտրվեն նորարարական լուծումներ, զգալիորեն կբարելավվեն ՀՀ պաշտպանության գործում քաղաքացիական և ռազմական մարմինների փոխգործակցությունը, գործառույթների բաժանումը, կփոխհամաձայնեցվեն գործողությունների պլանները ՀՀ պաշտպանության նախարարության և պետական կառավարման այլ մարմինների միջև: Գերակա խնդրի կատարումը կապահովի նաև ՀՀ կառավարության 2014 թվականի մայիսի 19-ի N 511-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի 2.1.1-ին կետով սահմանված պաշտպանության ոլորտում անվտանգության համակարգերի բարեփոխման շարունակականությունն ու ժամանակակից պահանջներին համապատասխանեցումը, արտաքին մարտահրավերների կանխարգելման ու համարժեք պատասխանի ապահովման համալիր միջոցառումների իրականացումը:

Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն	
64.	<p>Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ուրվագծված արտաքին քաղաքական ուղենիշների, տրված հանձնարարականների և Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի կատարում</p> <p>Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ուրվագծված արտաքին քաղաքականության ուղենիշների և տրված հանձնարարականների հիման վրա ՀՀ արտաքին գործերի նախարարության աշխատանքներն ուղղված են արցախյան հիմնավոր դիրքի խաղաղ կարգավորմանը, Հայաստանի արտաքին անվտանգության ռազմաքաղաքական բաղադրիչի ամրապնդմանը, Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանը, պետության զարգացման համար արտաքին բարենպաստ պայմանների ապահովմանը, երկրի հեղինակության ամրապնդմանը, արտերկրում հանրապետության և նրա քաղաքացիների շահերի պաշտպանությանը, միջազգային ասպարեզում Հայաստանի դիրքորոշումները ներկայացնելուն, միջազգային կազմակերպություններում և գործընթացներում ներգրավվածության խորացմանը, բարեկամ և գործընկեր երկրների հետ համագործակցության առավել ամրապնդմանը:</p> <p>Հայաստանի Հանրապետության տնտեսության հզորացման, արտաքին շուկաներում մրցունակության բարձրացման, տնտեսական կառույցների այժմեականացման, Հայաստանի տնտեսական ներուժի բազմապատկման և կայուն զարգացման նպատակով ՀՀ արտաքին գործերի նախարարության աշխատանքներն ուղղված են միջազգային և տարածաշրջանային տնտեսական և ֆինանսական կառույցների հետ հարաբերությունների զարգացմանը, Հայաստանի էներգետիկ անվտանգության ապահովմանը, հաղորդակցության ուղիների ապաշրջափակմանը, զարգացմանն ու դիվերսիֆիկացմանը, հայրենական արտադրանքի արտահանման համար նոր շուկաների բացահայտմանը և արտաքին ներդրումների խրախուսմանը:</p>
Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե	
65.	<p>WGS-84 (ՎԻ ՁԻ ԷՍ-84) գեոդեզիական կոորդինատային համակարգում մեկ միասնական քարտեզագրական հիմքի ստեղծման աշխատանքներ</p> <p>1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը) «WGS-84» (ՎԻ ՁԻ Էս-84) գեոդեզիական կոորդինատային</p>

	<p>համակարգում մեկ միասնական քարտեզագրական հիմքի ստեղծումն անհրաժեշտ է տնտեսության տարբեր բնագավառների (քաղաքաշինության, բնապահպանության, արդյունաբերության, կադաստրի, տարածքների պլանավորման, գյուղատնտեսական հողերի հաշվառման, հողերի միավորման, հողերի օգտագործման և գոտևորման սխեմաների կազմման, վարչատարածքային միավորների (համայնքների) սահմանների ամրացման, վարչական և տնտեսական գործունեության, մելիորացիայի, երկրաբանական հետախուզական աշխատանքների, անտառատնտեսության և այլն) խնդիրների լուծման, օգտագործողների լայն շրջանակների համար բաց հրատարակման տեղագրական և կադաստրային քարտեզների հասանելիության ապահովման, ինչպես նաև մեկ միասնական քարտեզագրական հիմքի ստեղծման համար: Այդ նպատակով 2009 թվականին Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից որպես գերակա խնդիր էր սահմանվել Հայաստանի Հանրապետության պետական մասշտաբային շարքի տեղագրական և կադաստրային քարտեզների տեղափոխումը «WGS-84» (Վի Ջի Էս-84) համաշխարհային գեոդեզիական կոորդինատային համակարգ:</p> <p>2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը</p> <p>2014 թվականին Հայաստանի Հանրապետության Շիրակի և Սյունիքի մարզերի՝ Հայաստանի Հանրապետության պետական մասշտաբային շարքի տեղագրական և կադաստրային քարտեզների տեղափոխումը «WGS-84» (Վի Ջի Էս-84) համաշխարհային գեոդեզիական կոորդինատային համակարգ:</p>
<p>66.</p>	<p>Բազային երկրատեղեկատվական համակարգերի ստեղծում Գյումրի քաղաքում (820 հա)</p> <p>1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)</p> <p>Աշխատանքները ներառում են թվային քարտեզագրական հիմքի ստեղծումը և անհրաժեշտ տվյալների հավաքագրումը՝ տեղագրական և կադաստրային քարտեզների ու հատակագծերի հիման վրա:</p> <p>Գյումրու քաղաքային համայնքի բազային երկրատեղեկատվական համակարգի 1:2000 մասշտաբի քարտեզագրական հիմքի ստեղծման նպատակով իրականացվելու են հետևյալ միջոցառումները՝</p> <p>1) համայնքի և հեռանկարային զարգացման նպատակով նախատեսված տարածքի համար ստեղծվելու են 1:2000 մասշտաբի</p>

	<p>տեղագրական և կադաստրային թվային համադրված հատակագծերը, որոնց համար հինք են հանդիսանալու 2001-2003 թվականների ընթացքում ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից ստեղծված 1:500 և 1:2000 մասշտաբների թվային կադաստրային քարտեզները, որոնց վրա իրականացվելու են քաղաքի 1:2000 մասշտաբի հատակագծերի թարմացման, ռելիեֆի տեղագրական տարրերի ստեղծման, տեղագրական հանույթների կազմման ու թվայնացման աշխատանքներ.</p> <p>2) անհրաժեշտ է զգալի փոփոխություններ կրած տարածքներում (ակտիվ կառուցապատման գոտիներում) կատարել 1:2000 մասշտաբի տեղագրական նոր հանույթագրում.</p> <p>3) տարածքի ստորգետնյա մայրուղային հաղորդակցուղիների հանութագրում և համաձայնեցում շահագործող կազմակերպությունների հետ.</p> <p>4) բազային երկրատեղեկատվական համակարգի համար անհրաժեշտ թեմատիկ շերտերի ստեղծում և բոլոր տարրերի տեքստային տվյալների մուտքագրում:</p> <p>2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը</p> <p>Գյումրու քաղաքային համայնքի բազային երկրատեղեկատվական համակարգի 1:2000 մասշտաբի քարտեզագրական հինքի ստեղծում:</p>
--	---

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	
67.	<p>Հայաստանի Հանրապետության սեփականությունը համարվող անշարժ գույքը (բացառությամբ հողամասերի) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության հաշվապահական հաշվեկշիռ փոխանցելու գործընթացի շարունակում, գույքի օգտագործման արդյունավետության գնահատում, գույքի կառավարման արդյունավետության բարձրացման վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելը և դրանց հիման վրա ՀՀ պետական բյուջեի մուտքերի ավելացման ապահովումը</p> <p>1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)</p> <p>Նախատեսվում է պետական սեփականություն համարվող անշարժ գույքի (բացառությամբ հողամասերի) ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության հաշվապահական հաշվեկշիռ փոխանցելու գործընթացի շարունակում, գույքի օգտագործման արդյունավետության գնահատում, գույքի կառավարման արդյունավետության բարձրացման վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելը և դրանց հիման վրա ՀՀ պետական բյուջեի մուտքերի ավելացման ապահովումը</p>

	<p>րությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության հաշվապահական հաշվեկշիռն փոխանցելու գործընթացի իրականացում՝ ըստ սահմանված ժամանակացույցի, և 3-ամյա ժամկետում այդ գործընթացի ավարտում: Տվյալ գործընթացն իրականացնելու համար անհրաժեշտ են գույքի հանձնմանը նդունման աշխատանքների արդյունավետության բարձրացում, գույքի վիճակի ուսումնասիրություններ և տեղեկությունների հավաքագրում: Նախատեսվում է ընդլայնել և ճշգրտել հաշվառվող գույքի դաշտը, գույքի օգտագործման գնահատման համար ընտրել համապատասխան ցուցանիշներ և գնահատել գույքի օգտագործման արդյունավետությունը:</p> <p>2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը</p> <p>Պետական սեփականություն համարվող անշարժ գույքի (բացառությամբ հողամասերի)՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության հաշվապահական հաշվեկշիռն փոխանցման գործընթացի շարունակություն և ավարտ, գույքի կառավարման արդյունավետության բարձրացման վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելը և դրանց հիման վրա ՀՀ պետական բյուջեի մուտքերի ավելացում:</p>
68.	<p>Պետական բաժնեմասով առևտրային կազմակերպություններում պետական բաժնեմասի կառավարման արդյունավետության բարձրացման վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելը</p> <p>1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)</p> <p>Պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններում պետական բաժնեմասի կառավարման արդյունավետության բարձրացման վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելը և դրանց հիման վրա ՀՀ պետական բյուջե լրացուցիչ մուտքերի ապահովում:</p> <p>Նշված աշխատանքներն իրականացնելու համար, նախ, անհրաժեշտ է ՀՀ արդարադատության նախարարության հետ ճշգրտել Իրավաբանական անձանց ռեգիստրի պետական միասնական գրանցամատյանում գրանցված՝ պետական բաժնեմաս ունեցող ընկերությունների ցանկը: Պետական բաժնեմասի տնօրինման լիազորություններն իրականացնող կառավարման մարմինների տրամադրած տեղեկատվության (գույքի կազմ, պարտավորություններ, արտադրական հնարավորություններ, գործունեության հեռանկարներ և այլն) վերլուծության արդյունքում ՀՀ կառավարություն կներկայացվեն առաջարկություններ</p>

	<p>ընկերությունների գործարկման, պետական բաժնետնասի պահպանման նպատակահարմարության, պետական բաժնետնասի օտարման, բաժնետերերի ընդհանուր ժողովում կազմակերպությունների լուծարման մասին առաջարկի քննարկման կամ այլ քայլերի վերաբերյալ:</p>
69.	<p>Վարձակալությունը (այդ թվում՝ ֆինանսական վարձակալությունը (լիզինգ) որպես պետական գույքի օգտագործման արդյունավետության բարձրացման գործիք կիրառելուն ուղղված քաղաքականության մշակում</p> <p>1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)</p> <p>Հայաստանի Հանրապետության պետական սեփականություն հանդիսացող գույքը տնտեսավարող սուբյեկտներին վարձակալությամբ տրամադրելու գործընթացի ակտիվացումը, ինչպես նաև պետական գույքը ֆինանսական վարձակալությամբ տրամադրելու համար նախադրյալների ստեղծումը, համապատասխան քաղաքականության մշակումը թույլ կտան տնտեսական շրջանառության մեջ դնել մինչև այժմ չօգտագործվող և տնտեսական արդյունք չապահովող պետական գույքը:</p> <p>2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը</p> <p>Հայաստանի Հանրապետության պետական սեփականություն հանդիսացող գույքի վարձակալության (ներառյալ ֆինանսական վարձակալությունը) բազայի ընդլայնման, միջոցառումների և դրանց իրականացման ժամանակացույցի սահմանման շնորհիվ հնարավոր է ավելացնել ՀՀ պետական բյուջեի դրամական մուտքերը և կանխատեսել դրանք:</p>
<p>Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանություն</p>	
70.	<p>Պարեկային ծառայության մոդելի ներդրման ուսումնասիրությունների կատարում</p> <p>1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)</p> <p>Այս գերակա խնդրի նպատակն օպերատիվ կառավարման կենտրոնի և ոստիկանության ստորաբաժանումների հստակ սահմանազատված և փոխհամաձայնեցված գործողություններով հասարակական կարգի պահպանության, հասարակական անվտանգության ապահովման, հասարակական վայրերում հանցագործությունների, վարչական իրավախախտումների հայտնաբերման, կանխման, խափանման, դրանց օպերատիվ արձագանքման և բացահայտման արդյունավետության բարձրացման վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելն է:</p>

	<p>2. Խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը</p> <p>Պարեկային ծառայության մոդելի ներդրման ուսումնասիրությունների կատարման արդյունքում կներկայացվեն հանցավորության կանխարգելման ու բացահայտման արդյունավետության բարձրացման վերաբերյալ առաջարկներ:</p>
71.	<p>ՀՀ Կոտայքի և Տավուշի մարզերում տրանսպորտային միջոցի գրանցման և հաշվառման գործողությունների իրականացման, ինչպես նաև վարորդական վկայականների հատկացման գործընթացի կատարելագործում</p> <p>1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)</p> <p>ՀՀ մարզերում ճանապարհային ոստիկանության կողմից բնակչությանը մատուցվող ծառայությունների որակը բարելավելու համար անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել ՀՀ մարզերում տեղակայված հաշվառման-քննական ստորաբաժանումներում տրանսպորտային միջոցների գրանցման և հաշվառման գործողությունները «հոսքագծի» եղանակով իրականացնելու, քաղաքացիներին որակյալ և պարզեցված ընթացակարգով ծառայություններ մատուցելու համար:</p> <p>Առաջարկվում է ներկայացված գերակա խնդրի իրականացմամբ ապահովել, մասնավորապես, ՀՀ Կոտայքի և Տավուշի մարզերում տեղակայված վարորդական վկայական հատկացնող և տրանսպորտային միջոցները հաշվառող ստորաբաժանումների կողմից ծառայությունների մատուցման արդյունավետությունն ու որակը, աշխատանքներ իրականացնել հաշվառման-քննական ստորաբաժանումների վարչական շենքերի և քննական ավտոդրոմի շահագործման համար:</p> <p>2. Գերակա խնդրի իրականացման դեպքում ակնկալվող արդյունքը</p> <p>Գերակա խնդրի իրականացման արդյունքում կբարելավվի ՀՀ մարզերում ճանապարհային ոստիկանության կողմից բնակչությանը մատուցվող ծառայությունների որակը: Մասնավորապես, մինչև 2014 թվականի ավարտը նախատեսվում է ՀՀ Կոտայքի մարզում ավարտել հաշվառման-քննական ստորաբաժանման վարչական շենքի և քննական ավտոդրոմի շահագործման աշխատանքները, իսկ նույն ժամանակահատվածում ՀՀ Տավուշի մարզում կիրականացվեն համապատասխան կապիտալ շինարարական աշխատանքների նախագծահաշվարկային աշխատանքները: ՀՀ Տավուշի մարզում հաշվառման-քննական ստորաբաժանման վարչական նոր շենք և քննական ավտոդրոմ կկառուցվեն, որոնք կշահագործվեն 2015 թվականի ընթացքում:</p>

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտե	
72.	<p style="text-align: center;">Կոմիտեի մասնագիտական կազմի համալրում բարձր որակավորում ունեցող կադրերով, նոր կադրերի պատրաստում, վերապատրաստում</p> <p style="text-align: center;">1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)</p> <p>Ինդիլրը պայմանավորված է ատոմային էներգիայի օգտագործման բնագավառի կարգավորման հիմնախնդիրների՝ ատոմակայանի գործող էներգաբլոկի անվտանգության բարձրացման ու շահագործման նախագծային ժամկետի երկարաձգման, շրջակա միջավայրի ճառագայթային մոնիթորինգի, միջուկային սահմանափակման գործառնության նվազեցման, միջուկային զենքի չտարածման երաշխիքների ապահովման, ճառագայթային անվտանգության ապահովման և իրնացնող ճառագայթումից պաշտպանության, ռադիոակտիվ թափոնների ու աշխատած միջուկային վառելիքի անվտանգ կառավարման գործառնություններով:</p> <p style="text-align: center;">2. Գերակա խնդրի իրականացման դեպքում ակնկալվող արդյունքը</p> <ol style="list-style-type: none"> 1) կոմիտեի աշխատակազմը համալրել նոր մասնագետներով. 2) կատարելագործել կոմիտեի մասնագիտական կազմի որակավորման գործընթացը, պատրաստել և վերապատրաստել կոմիտեի մասնագետներին՝ համաձայն ԱԷՄԳ-ի և ԵՄ-ի ուղեցույցների պահանջների, ըստ անհրաժեշտության կատարել կոմիտեի կառուցվածքային փոփոխություններ:
73.	<p style="text-align: center;">Ատոմային էներգիայի օգտագործման բնագավառի օրենսդրության համապատասխանեցում ԱԷՄԳ-ի և ԵՄ-ի պահանջներին՝ ըստ Եվրամիության սթրես-թեստերի արդյունքների</p> <p>«Ֆուկուշիմա» ԱԷԿ-ի վթարից հետո ԵՄ-ի առաջարկով ԱԷԿ-ներ շահագործող երկրներում իրականացվեցին սթրես-թեստ վերլուծություններ: Մինչև 2014 թ. վերջը ԵՄ-ի (ԱԷՄԳ-ի հետ) վերլուծությունների հիման վրա ներկայացվելու են ԱԷԿ-ների անվտանգության ապահովման նոր ստանդարտները և չափանիշները:</p> <p style="text-align: center;">1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)</p> <p>Կատարելագործել ատոմային էներգիայի օգտագործման բնագավառի օրենսդրությունը («Խաղաղ նպատակներով ատոմային</p>

	<p>Էներգիայի անվտանգ օգտագործման մասին» ՀՀ օրենքը, «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքը և այլ համապատասխան օրենքներ, ինչպես նաև անվտանգության նորմեր, կանոններ, պահանջներ, կարգեր, ուղեցույցներ և այլն)՝ համաձայն ԱԷՄԳ-ի, ԵՄ-ի ստանդարտների ու չափանիշների պահանջների և զարգացած երկրների փորձի ու մոտեցումների.</p> <ul style="list-style-type: none"> • ուժեղացնել անվտանգության վերլուծության, գնահատման կարողությունները և կատարելագործել տեսչական ստուգումների պրակտիկան. • կատարելագործել կոմիտեի կառավարման որակը՝ համաձայն միջազգային ստանդարտների պահանջների. • կատարելագործել կոմիտեի տեխնիկական աջակցության կազմակերպության՝ «Միջուկային և ռադիացիոն անվտանգության գիտատեխնիկական կենտրոն» ՓԲԸ-ի գործունեությունը: <p>2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը</p> <p>Խնդրի լուծմամբ կապահովվի կոմիտեի զարգացման ռազմավարական ծրագրի իրականացումը, ինչպես նաև հնարավորություն կընձեռվի միջուկային և ճառագայթային անվտանգության մակարդակը համապատասխանեցնելու միջազգային չափանիշներին:</p>
<p>Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն</p>	
<p>74.</p>	<p>«Զվարթնոց» միջազգային օդանավակայանի տարածքի բնակելի շենքերի բնակարանների սեփականատերերին և նախկին հանրակացարանների սենյակներում փաստացի բնակվող բնակիչներին նոր բնակարաններով ապահովելու նպատակով շինարարական աշխատանքների իրականացում</p> <p>1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)</p> <p>Ներկայիս «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի տարածքում առկա բնակեցված շենքերը հարմար չեն տեղակայված՝ թոփքային անվտանգության նկատառումներից ելնելով, և կարող են խանգարել հետագայում այդ տարածքում ազատ տնտեսական գոտու ենթակառուցվածքների կառուցման ժամանակ: «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի ամբողջական և արդիական շահա-</p>

	<p>գործման ապահովման նպատակով անհրաժեշտ է ավարտին հասցնել «Զվարթնոց» միջազգային օդանավակայանին հարակից տարածքում գտնվող բնակելի շենքերի բնակարանների սեփականատերերի և նախկին հանրակացարանների սենյակներում փաստացի բնակվող բնակիչների համար նոր բնակելի շենքերի կառուցման աշխատանքները:</p> <p>2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը</p> <p>Արդյունքում «Զվարթնոց» միջազգային օդանավակայանին հարակից տարածքում գտնվող բնակելի շենքերի բնակարանների սեփականատերերի և նախկին հանրակացարանների սենյակներում փաստացի բնակվող բնակիչների համար կկառուցվեն նոր բնակելի շենքեր, որով կլուծվի 176 ընտանիքի սոցիալական խնդիրը:</p>
75.	<p>Կոմերցիոն օդաչուների պատրաստում</p> <p>1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)</p> <p>Ելնելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ավիացիայի և փոքր ավիացիայի զարգացման ռազմավարությունից, որը ենթադրում է հայկական ավիափոխադրողների կողմից իրականացվող թռիչքների և ավիափոխադրումների ծավալի ավելացում, որից և բխում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ավիացիայի բնագավառում օդաչուների պահանջարկի աճ, ավարտին հասցնել «Ավիաուսումնական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության օդաչու ուսանողների թռիչքային պրակտիկան:</p> <p>2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը</p> <p>Արդյունքում ակնկալվում է ունենալ ավիացիոն միջազգային կազմակերպությունների (Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության ICAO հավելված 1) պահանջներին համապատասխան որակավորում ունեցող օդաչուներ:</p>
76.	<p>Աերոնավիգացիոն սպասարկում իրականացնող կազմակերպություններին գործունեության թույլտվության տրամադրում (սերտիֆիկացում)</p> <p>1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)</p> <p>«Ավիացիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդված 4-րդ մասի, ինչպես նաև Եվրամիության EU1035/2011 կանոնակարգի պահանջների համաձայն աերոնավիգացիոն սպասարկում կարող են իրականացնել լիազորված մարմնի կողմից</p>

	<p>թույլտվություն ստացած (սերտիֆիկացված) կազմակերպությունները:</p> <p>Հայաստանի Հանրապետությունում աներոնավիզացիոն սպասարկում իրականացնող կազմակերպություններ են «Հայաերոնավիզացիա» և «Զվարթնոց» ավիատրանսպորտային կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունները, որոնք մատուցում են համապատասխան աներոնավիզացիոն ծառայություններ՝ միայն լիազոր մարմինների նշանակումների համաձայն:</p> <p>2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքները</p> <p>Գերակա խնդրի լուծման դեպքում կունենանք աներոնավիզացիոն սպասարկում իրականացնող սերտիֆիկացված կազմակերպություններ, ինչը լիովին կհամապատասխանի Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և Եվրոպական միության ավիացիոն իշխանությունների պահանջներին:</p>
77.	<p>Եվրոպական հանձնաժողովի կողմից հաստատված «Air Operation's» կանոնակարգի տեղայնացում և կիրառում</p> <p>1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)</p> <p>2012 թվականի հոկտեմբերի 5-ին Եվրոպական հանձնաժողովի կողմից ընդունվել է «Air Operation's» կանոնակարգը, որը փոխարինում է JAR-OPS փաստաթղթին, իսկ սա ներկայումս կիրառվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ավիացիայի բնագավառում:</p> <p>«Air Operation's» փաստաթուղթն ուժի մեջ է մտնելու 2014 թվականի նոյեմբերի 1-ից, և անհրաժեշտություն է առաջացել փաստաթուղթը տեղայնացնելու և կիրառելու Հայաստանի Հանրապետությունում մինչև 2014 թվականի ավարտը:</p> <p>2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը</p> <p>Արդյունքում հնարավորություն կընձեռվի Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ավիացիայի բնագավառում ունենալու թռիչքային անվտանգության ոլորտը կարգավորող փաստաթղթեր, որոնք լիովին համահունչ կլինեն Եվրոպական ավիացիոն անվտանգության գործակալության (EASA) կողմից կիրառվող կանոնակարգերին, և դրանք հնարավորություն կտան հայկական ավիափոխադրողներին անարգել թռիչքներ իրականացնելու դեպի Եվրոպական միության երկրներ:</p>
<p>Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե</p>	

78.

Խմելու ջրի կայուն և հուսալի ջրամատակարարում, որակի ապահովում, ջրի կորուստների կրճատում, ջրամատակարարման տնտեսության աստիճանական ավելացում նախորդ տարվա նկատմամբ առնվազն մեկ ժամով, Սևանա լճի բնապահպանական խնդիրների լուծման միջոցառումների իրականացում, խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման համակարգերի վերանորոգում ու կառուցում, ջրային տնտեսության ոլորտի հետագա զարգացման ռազմավարական ծրագրերի մշակում, ինչպես նաև ջրամատակարար կազմակերպությունների կողմից չսպասարկվող բնակավայրերում ուսումնասիրությունների ավարտում և ներդրումային ծրագրերի նախապատրաստում

1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)

Գերակա խնդրի անհրաժեշտությունը պայմանավորված է հանրապետության մի շարք քաղաքների և գյուղական բնակավայրերի ջրամատակարարման բարելավմամբ, մատակարարվող խմելու ջրի որակի ապահովմամբ, կայուն և հուսալի ջրամատակարարմամբ, ջրի կորուստների կրճատմամբ, ջրամատակարարման տնտեսության աստիճանական ավելացմամբ, նոր վարկային ծրագրերի ներգրավման շուրջ բանակցությունների վարմամբ, ջրային տնտեսության ոլորտի հետագա զարգացման ռազմավարական ծրագրերի մշակմամբ, ինչպես նաև գյուղական բնակավայրերում ջրամատակարարման ներդրումային ծրագրերի ուսումնասիրությունների ավարտմամբ և ներդրումային ծրագրերի նախապատրաստմամբ:

2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը

Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվում են ջրամատակարար կազմակերպությունների կողմից սպասարկվող տարածքներում հուսալի և անվտանգ խմելու ջրի մատակարարման հասանելիության ապահովում, բնակավայրերի ջրամատակարարման ներդրումային ծրագրերի մշակում և իրականացում:

Գործող վարկային և դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում կիրականացվեն մի շարք քաղաքային ու գյուղական բնակավայրերի ջրամատակարարման բարելավման, կոյուղաջրերի մաքրման կայանների շինարարական աշխատանքներ: Արվիա-Սևան թունելի վերականգնման վարկային ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել Սևանա լճի մակարդակի բարձրացման և բնապահպանական կայունության պահպանման նպատակով գետերից Սևանա լիճ ջուր տեղափոխող Արվիա-Սևան հիդրոհամակարգային թունելի որոշ հատվածների վերականգնումը, վերանորոգումը և շինարարությունը:

79.	<p align="center">Ոռոգման համակարգերի վերականգնման ծրագրով շուրջ 50 կմ ոռոգման ջրանցքների վերականգնում</p> <p>1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը) Գերակա խնդրի անհրաժեշտությունը պայամանավորված է ոռոգման ջրի մատակարարման համակարգերի շահագործման հուսալիության և արդյունավետության բարձրացմամբ:</p> <p>2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը Ոռոգման ջրի արդյունավետ կառավարումը հնարավորություն կստեղծի ոռոգման, գյուղատնտեսության արդյունավետության ու կայուն զարգացման և բնակչության եկամտի ապահովման համար: Ոռոգման համակարգերի շահագործման հուսալիության և արդյունավետության բարձրացման միջոցառումների իրականացմամբ կապահովվեն ոռոգման համակարգերի վերականգնումը և հետագա պահպանումը: Միաժամանակ ինքնահոս համակարգերի, հեռացնող ջրանցքների և ջրատարների կառուցմամբ ու նորոգմամբ հնարավորություններ կստեղծվեն իրականացնելու ինքնարժեքի նվազման քաղաքականություն:</p>
80.	<p align="center">Ջրամբարաշինության և ենթակառուցվածքների արդիականացման ծրագրերի նախապատրաստում</p> <p>1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը) Նոր ջրամբարների շինարարության և առկա ենթակառուցվածքների արդիականացումը ջրային տնտեսության ոլորտում կենսական նշանակություն ունի՝ կապված ջրային ռեսուրսների կուտակման, արդյունավետ բաշխման, ինչպես նաև համակարգի ընդհանուր շահագործման հետ:</p> <p>Ջրամբարների և առկա ենթակառուցվածքների արդիականացման նպատակով անհրաժեշտ է համապատասխան դոնոր կազմակերպությունների հետ վարել բանակցություններ նոր ներդրումային ծրագրերի իրականացման շուրջ:</p> <p>2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը Ջրամբարաշինության միջոցով հնարավորություն կստեղծվի ոռոգման համակարգերի սպասարկման տարածքում ընդգրկված և լրացուցիչ ոռոգելի հողերի ջրամատակարարման համար անհրաժեշտ ջրի քանակն ապահովելու համար: Միաժամանակ նշված գերակա խնդրի լուծմամբ անհրաժեշտ նախադրյալներ կստեղծվեն ջրային համակարգերի օգտագործման արդյունավետության բարձրացման և կայուն զարգացման համար:</p>

81.	<p>Ջրային տնտեսության ոլորտի հետագա զարգացման ռազմավարական ծրագրերի մշակում, ջրամատակարարման ոլորտում կառուցվածքային և ինստիտուցիոնալ բարեփոխումների իրականացմամբ ունիվերսալ սակագնային քաղաքականության ներդրման աշխատանքների նախապատրաստում, ջրամատակարար կազմակերպությունների կողմից չսպասարկվող բնակավայրերում ուսումնասիրությունների ավարտում և ներդրումային ծրագրերի նախապատրաստում, ինչպես նաև ՀՀ ջրային օրենսգրքով նախատեսված կառավարման համակցված և խորացված ձևերի կիրառում</p> <p>1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը</p> <p>Գերակա խնդրի անհրաժեշտությունը պայմանավորված է ջրային տնտեսության ոլորտում պետական - մասնավոր գործընկերության զարգացմանն ուղղված ջրային համակարգերի կառավարման արդյունավետության հետագա բարձրացմամբ, ջրային ոլորտի հետագա զարգացման ռազմավարական ծրագրերի մշակմամբ, ինչպես նաև գյուղական բնակավայրերում ջրամատակարարման ներդրումային ծրագրերի ուսումնասիրությունների ավարտմամբ և ներդրումային ծրագրերի նախապատրաստմամբ: ՀՀ ջրային օրենսգրքի 49-րդ հոդվածով սահմանվում են ջրային համակարգի օգտագործման իրավունքի փոխանցման ձևերը: Խմելու ջուր մատակարարող կազմակերպությունների կողմից սպասարկվող ջրային համակարգերի օգտագործման իրավունքի փոխանցման ձևի որոշումը և հետագա գործընթացի կազմակերպումը հնարավորություն կտան ապահովելու ջրային համակարգում մասնավոր կազմակերպման շարունակականությունը:</p> <p>2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը</p> <p>Խմելու ջուր մատակարարող կազմակերպությունների մասով հնարավոր կլինի շարունակել ջրային համակարգերի օգտագործման իրավունքի փոխանցման գործընթացը: Առաջարկվող լուծումները հնարավորություն կտան նպաստելու բաժանորդներին մատուցվող ծառայությունների որակի բարձրացմանը, հուսալիության ապահովմանը, ջրամատակարար ընկերությունների ֆինանսական կայունությանը:</p> <p>Միաժամանակ, նշված գերակա խնդիրը նպատակաուղղված է ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտում իրականացվող բարեփոխումների շարունակմանը, ջրային համակարգերի կառավարման գործում մասնավոր հատվածի հետ</p>
-----	--

	<p>համագործակցության խորացմանն ու սպառողներին մատուցվող ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների որակի ու արդյունավետության բարձրացմանը:</p>
<p>Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայություն</p>	
82.	<p>Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի նոյեմբերի 10-ի N 1593-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության միգրացիայի պետական կարգավորման քաղաքականության հայեցակարգի իրականացման 2012-2016 թվականների գործողությունների ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացում</p> <p>1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)</p> <p>ՀՀ կառավարության 2011 թ. նոյեմբերի 10-ի N 1593-Ն որոշմամբ հաստատվեց Հայաստանի Հանրապետության միգրացիայի պետական կարգավորման քաղաքականության հայեցակարգի իրականացման 2012-2016 թթ. գործողությունների ծրագիրը (ԳԾ): Այն համահունչ է Եվրոպական հարևանության քաղաքականության ՀՀ-ԵՄ գործողությունների ծրագրին:</p> <p>Նշված փաստաթղթով նախատեսվում է 147 կոնկրետ գործողությունների իրականացում: Այդ գործողություններից 130-ը բաժին է ընկնում ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայությանը (ՄՊԾ), որից 86-ը՝ որպես պատասխանատու առաջին կատարող: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, որպես առաջին պատասխանատու կատարող, ներգրավված է 30, իսկ ՀՀ արտաքին գործերի նախարարությունը՝ 13 միջոցառումներում: Փաստորեն, ԳԾ-ի 59 տոկոս միջոցառումների իրականացման ասպահովման դեպքում ՄՊԾ-ն ստանձնում է անմիջական պարտավորություն՝ ԳԾ-ի իրականացման գործում դառնալով հիմնական պատասխանատու մարմին:</p> <p>Որոշմամբ ձևավորվել է ԳԾ-ի իրականացման մոնիթորինգի միջգերատեսչական հանձնաժողով, որի նախագահը ՄՊԾ-ի պետն է: ՄՊԾ-ն վարում է նաև նիստերի քարտուղարությունը: 2014 թ. սպասվում է 2012 և 2013 թվականներից շարունակվող 2, 2014 թ. սկսվող և ավարտվող՝ 4 և 2014 թ. սկսվող և հաջորդ տարիներին ավարտվող միջոցառումների 4 գործողություն:</p> <p>ՀՀ կառավարության նշված որոշմամբ նախատեսված է ԳԾ-ի պատասխանատու կատարող հանրապետական գործադիր մարմինների կողմից փաստաթղթով նախատեսված գործողությունների կատարման ընթացքի մասին կիսամյակային հաշվետվություն ներ-</p>

	<p>կայացնելը, իսկ ՄԳԾ-ի վրա դրված է ՀՀ կառավարություն ԳԾ-ի կատարողականի մասին տարեկան հաշվետվությունը ներկայացնելու պարտավորություն:</p> <p>Նախատեսվում է մոնիթորինգի հանձնաժողովի քննարկումների անցկացում, որոնց արդյունքում կբացահայտվեն ԳԾ-ի իրականացմանը խանգարող խոչընդոտները, և դրանց լուծման վերաբերյալ առաջարկություններ կներկայացվեն համապատասխան պետական կառավարման մարմիններ ու Հայաստանի Հանրապետության կառավարություն: Այդ առաջարկությունները կարող են վերաբերել առանձին գործողությունների փոխման, ցանկից հանման, կատարման նոր ժամկետների սահմանման և այլ նմանատիպ հարցերի: Նշված գործողությունները նպատակադրված են լինելու ապահովելու ԳԾ-ի իրագործումը:</p> <p>2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը</p> <p>Գերակա խնդրի լուծման դեպքում հնարավոր կլինի ապահովել ԳԾ-ի շրջանակներում նախատեսված գործողությունների արդյունավետ իրականացումը:</p>
<p>83.</p>	<p>Օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց Հայաստանի Հանրապետությունում ապաստան ստանալու մասին դիմումների քննարկման ընթացքում ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայությունում իրականացվելիք քայլերի ստանդարտացման մասին</p> <p>1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)</p> <p>«Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքով սահմանված է օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց կողմից ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայություն ներկայացված Հայաստանի Հանրապետությունում ապաստան ստանալու մասին դիմումների քննարկման ընթացակարգը:</p> <p>ՀՀ-ում ապաստան ստանալու մասին դիմումներն ընդունվում ու քննարկվում են ծառայության տարբեր ստորաբաժանումների տարբեր աշխատողների կողմից: Պրակտիկան ցույց է տալիս, որ կարիք կա ծառայության ներսում՝ ապաստան ստանալու մասին դիմումի քննարկման ամբողջ ընթացքն ստանդարտացնելու անհրաժեշտություն: ԵՄ-ի մի շարք երկրներում ապաստանի տրամադրման ընթացակարգն իրականացվում է՝ ինչպես նորմատիվ իրավական ակտերով, այնպես էլ՝ լիազոր մարմնի կողմից հաստատված ներքին կանոնակարգերով (հրահանգներով, ուղեցույցներով): Հայաստանի Հանրապետությունը որդեգրել է ապաստանի համակարգը եվրո-</p>

	<p>պական չափանիշներին համապատասխանեցնելու քաղաքականություն: Նման մոտեցումն արտացոլված է ՀՀ կառավարության 2011 թ. դեկտեմբերին ընդունված միգրացիայի պետական կարգավորման քաղաքականության իրականացման 2012-2016 թթ. գործողությունների ծրագրում:</p> <p>Նպատակահարմար է ծառայության ներսում մանրամասն սահմանել ապաստան ստանալու մասին դիմումների քննարկման բոլոր հնարավոր քայլերը:</p> <p>Ի լրումն ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայության պետի 2013 թվականի հուլիսի 25-ի «Ապաստանի տրամադրման ընթացակարգերի ստանդարտացմանն ուղղված միջոցառումների մասին» N 64-Ա հրամանի համաձայն հաստատված 6 ընթացակարգի՝ պլանավորված են ևս 8 ընթացակարգի մշակումն ու հաստատումը 2014 թվականին՝ Ռումինիայի ներքին գործերի և կառավարման նախարարության ներգաղթի գրասենյակի ու ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի հայաստանյան գրասենյակի աջակցությամբ:</p> <p>Հաշվի առնելով նշվածը՝ անհրաժեշտություն է առաջանում, որպեսզի ապաստանի տրամադրման ընթացակարգի ստանդարտացման կազմակերպումը դառնա գերակա խնդիր:</p> <p>2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը</p> <p>Լուծումների կիրառման դեպքում հնարավոր կլինի որպես արդյունք ակնկալել Հայաստանի Հանրապետությունում ապաստան ստանալու մասին դիմումների քննարկման ընթացակարգերի՝ եվրոպական չափանիշներին համապատասխանեցումը, ինչպես նաև՝ ապաստան ստանալու մասին դիմումների քննարկման արդյունավետության բարձրացումը:</p>
<p align="center">Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով</p>	
<p>84.</p>	<p align="center">Մրցակցային միջավայրի բարելավում</p> <p>1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)</p> <p>1. Մշտական ուշադրության կենտրոնում պահել բարձր կենտրոնացվածության աստիճան ունեցող ապրանքային շուկաները՝ այդ շուկաներում գործող՝ գերիշխող դիրք ունեցող տնտեսավարող սուբյեկտների կողմից գերիշխող դիրքի չարաշահումները հայտնաբերելու, կանխարգելելու և դադարեցնելու նպատակով:</p> <p>2. Իրականացնել կենտրոնացված ապրանքային շուկաներում տնտեսավարող սուբյեկտների վարքագծի ուսումնասիրություն, այդ ապրանքային շուկաներում տնտեսավարող սուբյեկտների</p>

	<p>միջև հակամրցակցային համաձայնությունների կայացման նկատմամբ հսկողություն՝ հակամրցակցային համաձայնությունների կանխարգելման նպատակով:</p> <p>3. Համակենտրոնացման պետական վերահսկողություն, ինչը միտված է մրցակցային միջավայրի վատթարացման կանխմանը, տնտեսական մրցակցությունն էապես խոչընդոտող, այդ թվում գերիշխող դիրքի հանգեցնող կամ գերիշխող դիրքն ամրապնդող համակենտրոնացումների կանխարգելմանն ու բացառմանը:</p> <p>4. Վերացնել շուկա մուտք գործելու խոչընդոտները՝ ապահովելով հավասար մրցակցային պայմաններ՝ ինչպես ներքին արտադրողների, այնպես էլ՝ ներմուծողների համար:</p> <p>5. Իրականացնել աշխատանքներ՝ անբարեխիղճ մրցակցության դրսևորումների հայտնաբերման, դրանց դադարեցման և հետագայում բացառման նպատակով:</p> <p>6. Առանցքային շեշտադրումներ անել սպառողների շահերի պաշտպանության արդյունավետ մեխանիզմների ներդրման համար:</p> <p>2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը</p> <p>7. Նման հսկողության միջոցով՝ տնտեսավարող սուբյեկտների գործունեությունը կողողորդվի շուկայական տնտեսության կանոնների պահպանմանը:</p> <p>8. Նոր տնտեսավարող սուբյեկտների շուկա մուտք գործելու համար կստեղծվեն հավասար պայմաններ:</p> <p>9. Բարեխիղճ մրցակցության համար կապահովվի անհրաժեշտ միջավայր:</p>
--	---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ